

## ԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

- 1) Թողարկողի կանոնադրության պատճենը
- 2) Թողարկողի պետական գրանցման վկայականի պատճենը
- 3) Պարտատոմսերի թողարկման մասին որոշման պատճենը
- 4) Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի եզրակացության պատճենները
- 5) «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հետ 20.05.2008թ. կնքված Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման ծառայությունների մատուցման մասին պայմանագրի պատճենը
- 6) 05.06.2008թ. կնքված Տեղաբաշխման խմբի ստեղծման և գործունեության մասին պայմանագրի պատճենը
- 7) Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքված պայմանագրի պատճենը
- 8) Ազդագրի ստորագրման թվով 5 լիազորագրեր
- 9) Պետական տուրքի անդորրագիրը



Գրանցված է  
Հայաստանի Հանրապետության  
ձեռնարկությունների պետական  
ռեգիստրի կողմից

"16" 06 2000 թ.

գրանցման թիվ ՀԵԿ 120 04128  
վկայականի թիվ ՀՄԿ 009534  
պետական ռեգիստրի  
տարածքային բաժնի պետ

*Ս. Ս. Ս. Ս.*  
20.06.2000թ.

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ - ՌՈՒՍԱԿԱՆ «ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ»  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
(նոր խմբագրություն)

ԵՐԵՎԱՆ 2000 թ.

Հայ-Ռուսական «ՀԱՅՈՒՄԳԱԶԱՐԴ» փակ բաժնետիրական ընկերությունը (սույն կանոնադրության հետագա տեքստում՝ Ընկերություն), ստեղծված է Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի նախարարության, «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության ( «Գազպրոմ» ԲԲԸ) և «Իտերա» միջազգային էներգետիկական կորպորացիայի («Իտերա») կողմից՝ 1997թ. օգոստոսի 30-ին կնքված հիմնադիր պայմանագրի, Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության հիման վրա, Հայաստանի Հանրապետության Կառավարության և «Գազպրոմ» ռուսական բաժնետիրական ընկերության միջև 1997թ. հունվարի 18-ին Մոսկվայում կնքված «Հայաստանի Հանրապետության տարածքում գազամուղների կառուցման և շահագործման, Հայաստանի Հանրապետության տարածքով ռուսական բնական գազի տարանցման, էլեկտրաէներգիայի արտադրության և երրորդ երկրներ դրա տարանցման մասին» համաձայնագրի համաձայն:

## ՀՈՂՎԱԾ 1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Ընկերությունը հանդիսանում է իրավաբանական անձ, որն ստեղծված է և գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության /այսուհետ՝ Օրենսդրություն/, հիմնադիր պայմանագրի, սույն կանոնադրության (նոր խմբագրություն) հիման վրա:

Ընկերությունը հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն:

1.2. Ընկերությունը համարվում է ստեղծված և կարող է գործել որպես իրավաբանական անձ նրա պետական գրանցման պահից:

1.3. Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային, արտարժույթային ու այլ հաշիվներ բանկերում և այլ վարկային կազմակերպություններում՝ ինչպես Հայաստանի տարածքում, այնպես էլ արտերկրում, իր անվանումով կլոր կնիք հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, կնիքներ և բլանկներ իր անվամբ, ինչպես նաև Օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված խորհրդանշան, պայմանանշան, ապրանքանշան և այլ նշաններ:

Ընկերությունն ունի իր հիմնադիրների գույքից առանձնացված գույք: Ընկերությունը իրավունք ունի իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կատարել պարտականություններ, հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող դատարաններում:

1.4. Ընկերությունը ինքնուրույն իրականացնում է իր գործունեության նպատակների իրականացման համար անհրաժեշտ արտահանման և ներկրման գործողություններ, ինչպես նաև սահմանում է իր ապրանքների և ծառայությունների գները, եթե Օրենսդրությամբ այլ բան չի նախատեսվում:

1.5. Իր գործունեության իրականացման համար Ընկերությունը, Օրենսդրության համաձայն, իրավունք ունի ստեղծել և/կամ բացել ներկայացուցչություններ, մասնաճյուղեր, համատեղ և այլ կազմակերպություններ Հայաստանի Հանրապետության տարածքում կամ նրա սահմաններից դուրս, ինչպես նաև մտնել այլ տնտեսական ընկերակցությունների, ընկերությունների և միությունների մեջ՝ անկախ նրանց սեփականության ձևից:

1.6. Ընկերությունը հանդիսանում է կանոնադրական կապիտալում որպես ներդրում նրան փոխանցված գույքի, ներառյալ դրամական միջոցները, գազի արդյունաբերության նոր ստեղծվող և վերակառուցվող օբյեկտների, և տնտեսական գործունեության արդյունքում Ընկերության կողմից թողարկվող արտադրանքի, ստացված եկամուտների, Օրենսդրության համաձայն ձեռք բերած այլ գույքի սեփականատեր:

1.7. Ընկերությունը իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի և պետության պարտավորությունների համար:

Պետությունը և Ընկերության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընկերության գործունեության ընթացքում առաջացած վնասների համար Ընկերության բաժնետերերը պատասխանատվություն են կրում իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում:

Բաժնետոմսերի դիմաց վճարումները ոչ լրիվ կատարած բաժնետերերը Ընկերության պարտավորությունների համար կրում են համապարտ պատասխանատվություն մաս իրենց կողմից չվճարած ներդրման սահմաններում:

1.8. Ընկերությունը ստեղծված է 50 տարի ժամկետով: Ընկերության գործունեության ժամկետը կարող է երկարաձգվել բաժնետերերի փոխադարձ համաձայնությամբ:

1.9 Սույն Ընկերության պաշտոնական և ուղեկցող մամուլագրական լեզուն են հանդիսանում ռուսերեն և հայերեն լեզուները: Աշխատանքային լեզուն ռուսերենն է: Երրորդ անձանց հետ մամուլագրության մեջ Ընկերությունը իրավունք ունի օգտվելու մաս ալ լեզվից:

1.10. Ընկերության անվանումը հայերեն լեզվով՝ Հայ-Ռուսական «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերություն:

Ընկերության կրճատ անվանումը հայերեն լեզվով՝ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ:

Ընկերության անվանումը ռուսերեն լեզվով՝ Армянско-Российское закрытое акционерное общество "АрмРосгазпром".

Ընկերության կրճատ անվանումը ռուսերեն լեզվով՝ ЗАО "АрмРосгазпром".

Ընկերության անվանումը անգլերեն լեզվով՝ Armenian-Russian Closed Type Joint-Stock Company "ArmRusgasprom".

Ընկերության կրճատ անվանումը անգլերեն լեզվով՝ Closed Type Joint-Stock Company "ArmRusgasprom"

1.11. Ընկերության գտնվելու վայրը (իրավաբանական հասցեն)՝ Հայաստանի Հանրապետություն, 375094, ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 43:

## ՀՈԳՎԱԾ 2

### ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Ընկերության ստեղծման հիմնական նպատակն է նոր ստեղծվող տարանցիկ գազամուղների և գազի ստորգետնյա պահեստարանների մախագծման, ֆինանսավորման, կառուցման և շահագործման գծով ծրագրերի իրականացումը, ինչպես մաս գործող գազատար համակարգերի ընդլայնումը, վերակառուցումն ու դրանց շահագործումը, շահույթի ստացումը:

2.2. Ընկերության գործունեության առարկան է հանդիսանում.

-ռուսական բնական գազի տարանցիկ փոխադրումը Հայաստանի Հանրապետության տարածքով դեպի երրորդ երկրներ.

-բնական գազի մատակարարումն ու իրացումը Հայաստանի Հանրապետության ներքին շուկայում.

-էլեկտրաէներգիայի արտադրությունը, տարանցիկ փոխադրումն ու իրացումը , այդ թվում երրորդ երկրներ.

-գործող գազատար համակարգերի վերակառուցումն ու ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում.

-գազատար համակարգերի և ենթակառուցվածքի նախագծումը, ֆինանսավորումը, կառուցումը և շահագործումը Հայաստանի Հանրապետության տարածքում և երրորդ երկրներում.

- շինարարության որակի տեխնիկական հսկողությունը.

- ներդրումների նախագծերի կազմակերպումը և իրացումը.

-մեքենաների, սարքավորումների, նյութերի համալրումը և մատակարարումը, այդ թվում ներմուծման եղանակով, որոնք անհրաժեշտ են գազատարների, դրանց հետ կապված տեխնոլոգիական օբյեկտների և ենթակառուցվածքի կառուցման և շահագործման համար.

-առևտրային գործունեությունը, ներառյալ արտահանման-ներմուծման գործողությունները գազատարների և դրանց հետ կապված տեխնոլոգիական օբյեկտների ու ենթակառուցվածքի նախագծման, կառուցման և շահագործման ժամանակ.

-հետևյալ ծառայությունների մատուցումը.

խորհրդատվական, մարքեթինգային, գովազդային, ինչպես նաև գազատարների, տեխնոլոգիական օբյեկտների և ենթակառուցվածքի նախագծման, կառուցման և շահագործման հետ կապված այլ ծառայություններ.

- Օրենսդրությամբ չարգելված տնտեսական գործունեության այլ տեսակներ:

2.3. Գործունեության այն տեսակները, որոնց իրականացման համար օրենսդրությամբ նախատեսված է լիցենզավորում, Ընկերությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության համապատասխան իրավասու մարմինների կողմից լիցենզիաներ ստանալուց հետո:

### ՀՈՂՎԱԾ 3

#### ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԳՈՒՅՔԸ

3.1. Ընկերության միջոցներն ու գույքը կազմում են`

- բաժնետերերի դրամական և գույքային ներդրումները.

-տնտեսական գործունեությունից ստացված արտադրանքը և շահույթը.

-արժեթղթերի հետ գործառնություններից ստացված շահույթը.

-բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ու վարկատուների վարկերը.

-բարեգործական ներդրումներն ու կազմակերպությունների, ձեռնարկությունների և քաղաքացիների նվիրատվությունները.

-Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրները:

### ՀՈՂՎԱԾ 4

#### ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

4.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 280 մլն. ԱՄՆ\$, որը համարժեք է 140742000000 հայկական դրամի, 1997թ. օգոստոսի 15-ի դրությամբ:

Կանոնադրական կապիտալը բաժանված է 28 մլն. (քսան ութ միլիոն) անվանական արժեքով սովորական անվանական բաժնետոմսերի` յուրաքանչյուրը 10 ԱՄՆ \$ արժեքով:

Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի նախարարությանը պատկանում է 12600000 հատ սովորական անվանական բաժնետոմս 126մլն. ԱՄՆ \$ գումարի չափով, որը համարժեք է 63333900000 հայկական դրամի, և կազմում է Կանոնադրական կապիտալի 45 %:

«Գազպրոմ» ԲԲԸ-ին պատկանում է 12600000 հատ սովորական անվանական բաժնետոմս 126մլն. ԱՄՆ \$ գումարի չափով, որը համարժեք է 63333900000 հայկական դրամի, և կազմում է Կանոնադրական կապիտալի 45 %:

«Իտերա»-ին պատկանում է 2800000 հատ սովորական անվանական բաժնետոմս 28մլն. ԱՄՆ \$ գումարի չափով, որը համարժեք է 14074200000 հայկական դրամի, և կազմում է Կանոնադրական կապիտալի 10%:

4.2. Բաժնետոմսերի լրիվ վճարումը կատարվում է թողարկման որոշմամբ բայց ոչ ուշ բաժնետոմսերի տեղաբաշխման ժամկետից:

ԱՄՆ-ի \$-ի և Հայաստանի Հանրապետության ազգային դրամի փոխարժեքի վերահաշվարկը իրականացվում է ներդրման պահին տարադրամի նկատմամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի սահմանած հաշվարկային փոխարժեքից ոչ բարձր:

4.3. Բաժնետերերի համաձայնությամբ և անկախ աուդիտի գնահատմամբ կանոնադրական կապիտալի մուծումների հաշվին կարող են ներդրվել շենքեր, շինություններ, սարքավորումներ, նյութեր, այլ նյութական արժեքներ, արժեթղթեր, հողից, այլ բնական ռեսուրսներից, շենքերից, շինություններից և սարքավորումներից օգտվելու իրավունքներ, ինչպես նաև այլ գույքային իրավունքներ, կամ այնպիսի իրավունքներ, որոնք ունեն դրամական գնահատում (այդ թվում մտավորական սեփականության), դրամական միջոցներ դրամով և արտարժույթով:

4.4. Սահմանված ժամկետներում իր տեղաբաշխված բաժնետոմսերի փաթեթի արժեքը չվճարելու դեպքում բաժնետերը պարտավոր է Ընկերությանը վճարել տուգանք՝ տարեկան ժամկետանց գումարի 5 տոկոսի չափով:

4.5. Ներդրողների կողմից որպես կանոնադրական կապիտալ ներդրած նյութական արժեքների գների փոփոխությունը չի ազդում կանոնադրական կապիտալում բաժնետերերի բաժնեմասի չափի վրա:

4.6. Բաժնետերերը չունեն առանձնացված իրավունք առանձին օբյեկտների նկատմամբ, որոնք մտնում են Ընկերության գույքի մեջ, այդ թվում հիմնադիրների կողմից կանոնադրական կապիտալ ներդրված օբյեկտների վրա:

4.7. Ընկերությունը իրավունք ունի փոփոխել (մեծացնել կամ նվազեցնել) կանոնադրական կապիտալի չափը՝ Օրենսդրության համապատասխան:

4.8. Կանոնադրական կապիտալի մեծացումը իրականացվում է նոր բաժնետոմսերի թողարկմամբ կամ բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացմամբ:

4.9. Կանոնադրական կապիտալի նվազեցում իրականացվում է բաժնետոմսերի անվանական արժեքի նվազեցմամբ կամ Ընկերության բաժնետերերից բաժնետոմսերի մասի հետգնմամբ՝ դրանց ընդհանուր քանակը պակասեցնելու նպատակով:

## ՀՈԴՎԱԾ 5

### ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՍՍԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՍՍԵՐԸ

5.1. Ընկերության բաժնետոմսերը հանդիսանում են արժեթղթեր, որոնք հավաստում են Բաժնետիրոջ Ընկերության շահույթից շահութաբաժնի ձևով մաս ստանալու, բաժնետիրական ընկերության գործերի կառավարմանը մասնակցելու և նրա լուծարումից հետո մնացած գույքից մաս ստանալու իրավունքը:

5.2. Ընկերության բոլոր բաժնետոմսերը բաշխվում են բաժնետերերի միջև: Բաժնետերերից յուրաքանչյուրին պատկանող բաժնետոմսերի քանակը սահմանվում է սույն կանոնադրությամբ: Բաժնետերերին պատկանող բաժնետոմսերի վճարման կարգը և ժամկետները, ինչպես նաև այդ

պարտավորությունների չկատարման դեպքում պատասխանատվությունը սահմանվում է սույն կանոնադրությամբ և տեղաբաշխման մասին որոշմամբ:

5.3. Բաժնետերերի ընդհանուր ժողովում Ընկերության յուրաքանչյուր բաժնետոմս իր բաժնետիրոջը տալիս է մեկ ձայնի իրավունք՝ բոլոր հարցերի լուծման ժամանակ: Բաժնետոմսն անբաժանելի է: Երկու կամ ավելի անձանց կողմից մեկ բաժնետոմսի սեփականատեր հանդիսանալու դեպքում, բաժնետերերը Ընկերությունում հանդես են գալիս որպես մեկ բաժնետեր:

5.4. Ընկերության բոլոր բաժնետոմսերը հանդիսանում են սովորական անվանական: Նրանց շրջանառությունը գրանցվում է բաժնետերերի ռեեստրում, որը վարվում է Ընկերության կողմից՝ նշելով բաժնետիրոջ տվյալները, ձեռք բերման ամսաթիվը և յուրաքանչյուր բաժնետիրոջ բաժնետոմսերի քանակը: Բաժնետերերին տրվում է հավաստագիր (սերտիֆիկատ)՝ նրանց արժեքը լրիվ վճարելուց հետո:

Բաժնետոմսերի սերտիֆիկատի տրման, փոփոխման և փոխանցման կարգը սահմանում է Ընկերության տնօրենների խորհուրդը:

5.5. Բաժնետոմսերը կարող են այլ անձանց սեփականությանն անցնել միայն Օրենսդրության համաձայն և Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով:

5.6. Ընկերության բաժնետերերը ունեն բաժնետոմսերի ձեռք բերման նախապատվության իրավունք կանոնադրական կապիտալի մեծացման և բաժնետիրոջ կողմից իրեն պատկանող բոլոր բաժնետոմսերի կամ դրանց մի մասի օտարման դեպքում:

5.7. Բաժնետերը, որը ցանկանում է իրացնել (փոխանցել) բաժնետոմսերը, պարտավոր է գրավոր տեղեկացնել այդ մասին Ընկերության մյուս բաժնետերերին և Ընկերության վարչությանը՝ նշելով օտարվող բաժնետոմսերի քանակը և արժեքը՝ բաժնետերերին առաջարկելով ձեռք բերել օտարվող բաժնետոմսերը: Բաժնետերերը, որոնք ցանկանում են ձեռք բերել բաժնետոմսեր, պետք է 30 օրացույցային օրերի ընթացքում տեղեկացնեն բաժնետոմսեր օտարող բաժնետիրոջը և Ընկերության վարչությանը, դրանց ձեռք բերման կամ գնելուց հրաժարվելու իր մտադրության մասին: Բաժնետոմսերը գնելու բաժնետերերի հրաժարվելու դեպքում վարչությունը, այդ մասին տեղեկություն ստանալուց 30 օրացույցային օրերի ընթացքում, պարտավոր է որոշում ընդունել Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելու կամ ձեռք բերելուց հրաժարվելու մասին և տեղեկացնել ընդունված որոշման մասին բաժնետոմսերը առաջարկող բաժնետիրոջը: Բաժնետոմսերը ձեռք բերելուց Ընկերության հրաժարվելու դեպքում բաժնետերը իրավունք ունի իրացնել իր բաժնետոմսերը երրորդ անձանց, նույն պայմաններով:

5.8. Լրացուցիչ թողարկված բաժնետոմսերի վճարումը կատարվում է Հայաստանի Հանրապետության ազգային արժույթով, այլ արտարժույթով կամ գույքի փոխանցման ճանապարհով: Ընդ որում նոր թողարկված բաժնետոմսերի վաճառքը չպետք է խախտի կանոնադրական կապիտալում բաժնետերերի բաժնեմասերի հարաբերակցությունը:

5.9. Ընկերությունը իրավունք ունի թողարկելու պարտատոմսեր և այլ արժեթղթեր Օրենսդրության համապատասխան: Ընկերության տնտեսական գործունեությունից առաջացած պարտքերի մարման համար բաժնետոմսերի թողարկում չի թույլատրվում:

**ՀՈԴՎԱԾ 6**  
**ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ**  
**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

6.1. Ընկերության բաժնետերերը իրավունք ունեն.

- ստանալու իրենց պատկանող բաժնետոմսերի անվանական արժեքին համամասնական շահույթի մասը, որը սահմանվում է ընդհանուր ժողովի կողմից.
- մասնակցել անձամբ, կամ իր ներկայացուցիչների միջոցով ընդհանուր ժողովին և ընդհանուր ժողովի օրակարգի համապատասխան հարցերի լուծմանը.
- տեղեկություն ստանալ Ընկերության գործունեության մասին.
- մասնակցել Ընկերության կառավարմանը.
- Ընկերության լուծարման դեպքում ստանալ իրենց հասանելի գույքի բաժինը.
- առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերը՝ պահպանելով Օրենսդրության պահանջները.
- Ընկերությունից դուրս գալ իրենց պատկանող բաժնետոմսերի փաթեթի օտարման ճանապարհով, ընդ որում բաժնետոմսերի վաճառքը իրականացվում է՝ հաշվի առնելով մյուս բաժնետերերի նախապատվության իրավունքը.
- օտարել կամ այլ միջոցով փոխանցել երրորդ անձանց իրենց պատկանող բաժնետոմսերը՝ ընկերության համաձայնությամբ.
- այլ իրավունքներ, որոնք նախատեսված են Օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

6.2. Բաժնետերերը պարտավոր են.

- Ընկերության գործունեության ժամանակաշրջանում և նրա դադարեցումից հետո երեք տարվա ընթացքում պահպանել ստացված տեղեկությունների գաղտնիությունը.
- տեղեկության ծավալը, ցանկը և երրորդ անձանց դրա փոխանցման կարգը որոշվում է վարչության կողմից և հաստատվում է Ընկերության տնօրենների խորհրդի կողմից.
- պահպանել սույն կանոնադրության դրույթները.
- կատարել Ընկերության նկատմամբ ստանձնած պարտավորությունները.
- աջակցել Ընկերությանը նրա գործունեության իրականացման գործում.
- վճարել ձեռք բերված բաժնետոմսերի արժեքը՝ Ընկերության կողմից սահմանված ժամկետներում:

**ՀՈԴՎԱԾ 7**  
**ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

7.1. Ընկերությունը ինքնուրույն է պլանավորում և իրականացնում իր տնտեսական գործունեությունը իր նպատակներին և գործունեության առարկային համապատասխան, ունի ինքնուրույն հաշվեկշիռ և գործում է ինքնաձախաձածաձկման և ինքնաֆինանսավորման հիման վրա:

7.2. Ընկերությունը ստեղծում է պահուստային ֆոնդ կանոնադրական կապիտալի ոչ պակաս 15%-ի չափով, նրա մեջ ներդնելով հատկացումներ՝ Ընկերության տարեկան մաքուր շահույթից:

Եթե պահուստային ֆոնդը կազմում է ավելի փոքր մասնաչափ, քան սահմանված է սույն կանոնադրությամբ, հատկացումները ֆոնդին կատարվում են Ընկերության մաքուր շահույթի ոչ պակաս 5%-ի (հինգ տոկոսի) չափով: Ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ պահուստային



ֆոնդը ծախսվում է ընկերության վնասները մարելու, ինչպես նաև պարտատոմսերի մարման և ընկերության բաժնետոմսերի հետզնման նպատակով, եթե ընկերության շահույթը բավարար չէ այդ նպատակի համար: Պահուստային ֆոնդը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար: Պահուստային ֆոնդի միջոցները տնօրինում է ընկերության խորհուրդը:

7.3. Ընկերությունում կարող են կազմավորվել նաև այլ ֆոնդեր: Ֆոնդերի քանակը, նպատակը, չափը, ստեղծման աղբյուրները և օգտագործումը սահմանվում են ընկերության ընդհանուր ժողովի կողմից:

7.4. Ընկերության տարեկան շահույթի ողջ գումարը, հանելով պետական բյուջե պարտադիր հատկացումները՝ օրենսդրության համաձայն, ընդհանուր ժողովի կողմից ընկերության ֆոնդեր հատկացումները և սահմանված այլ վճարումները, բաշխվում է բաժնետերերի միջև կանոնադրական կապիտալում իրենց ունեցած մասնաբաժնի չափին համապատասխան կամ ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված այլ կարգով:

«Գազպրոմ» ԲԲԸ-ն և «Իտերա»-ն իրավունք ունեն անարգել կերպով Ռուսաստանի Դաշնություն և այլ երկրներ փոխադրել ընկերության գործունեության արդյունքում ստացված շահույթի մի մասը ցանկացած արտարժույթով:

7.5. Ընկերությունը վարում է հաշվապահական և ֆինանսական հաշվետվություն, ինչպես նաև գործավարություն ռուսերեն և հայերեն լեզուներով՝ Օրենսդրության համապատասխան և ընդհանուր ժողովի կողմից սահմանված կարգով:

7.6. Յուրաքանչյուր տարվա վերջում ընկերությունը կազմում է տարեկան հաշվետվություն (հաշվեկշիռ) և ներկայացնում ընկերության ընդհանուր ժողովի հաստատմանը:

Ընկերությունը՝ Օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնում է ֆինանսական և վիճակագրական հաշվետվություն:

7.7. Ընկերությունը իրավունք ունի վարկեր վերցնել Հայաստանի և արտերկրի ցանկացած իրավաբանական և ֆիզիկական անձանցից, ինչպես նաև հաշիվներ բացել ազատ փոխարկելի և այլ արտարժույթով՝ Օրենսդրության համապատասխան:

7.8. Ընկերության ֆինանսական տարին սկսվում է հունվարի 1-ից (բացառությամբ գործունեության առաջին տարուց) և ավարտվում է ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ին:

7.9. Ընդհանուր ժողովի որոշմամբ ընկերությունը կարող է օգտագործել իր միջոցները բնակարանային, արդյունաբերական, սոցիալ-մշակութային օբյեկտների շինարարության բաժնեմասային մասնակցության նպատակով, ինչպես նաև իր աշխատողների սոցիալական կարիքների բավարարման համար:

## ՀՈԴՎԱԾ 8

### ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

8.1. Ընկերության կառավարման մարմիններն են.

- բաժնետերերի ընդհանուր ժողովը,
- Ընկերության տնօրենների խորհուրդը,
- Գլխավոր տնօրենը, Ընկերության վարչությունը:

**ՀՈՒՎԱԾ 9**  
**ՀԻՄՆԱԳԻՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ**

9.1. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է հանդիսանում բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ ընդհանուր ժողով):

Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել ընդհանուր ժողով:

Ընկերության բաժնետերերի հիմնադիր ժողովը համարվում է նրա առաջին ընդհանուր ժողովը:

9.2. Ժողովում իրավունք ունեն մասնակցել Ընկերության բոլոր բաժնետերերը, անկախ իրենց պատկանող բաժնետոմսերի քանակից կամ պատշաճ կերպով լիազորված բաժնետերերի ներկայացուցիչները:

Մեկ բաժնետիրոջ ներկայացուցիչների քանակը չի սահմանափակվում:

Բաժնետերերի ներկայացուցիչները կարող են լինել մշտական կամ նշանակվել որոշակի ժամկետով:

Բաժնետերը իրավունք ունի ցանկացած ժամանակ փոխարինել իր ներկայացուցչին ընդհանուր ժողովում:

Ընդհանուր ժողովում մասնակցող բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները) գրանցվում են՝ նշելով իրենց պատկանող ձայների քանակը: Ընդհանուր ժողովի մասնակիցների գրանցման ցուցակը ստորագրվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի նախագահի և քարտուղարի կողմից:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև Ընկերության բաժնետեր չհանդիսացող Ընկերության տնօրենների խորհրդի և գործադիր մարմնի անդամները:

9.3. Բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում.

ա/ Ընկերության կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

բ/ Ընկերության վերակազմակերպումը.

գ/ Ընկերության լուծարումը, լուծարքային հանձնաժողովի նշանակումը, միջանկյալ և ամփոփիչ լուծարքային հաշվեկշիռների հաստատումը.

դ/ Ընկերության տնօրենների խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, Ընկերության տնօրենների Խորհրդի կանոնակարգի հաստատումը, պարզևատրման սահմանումը.

ե/ հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

զ/ բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի մեծացումը.

է/ Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման ճանապարհով, ընդհանուր ժողովի կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռք բերմամբ բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով.

ը/ Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, պարզևատրման սահմանումը.

թ/ Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ժ/ Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթի և վնասների հաշվի, Ընկերության շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը, ինչպես նաև Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը.

ժա/ Ընդհանուր ժողովի վարման կարգը և հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

ժբ/ Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը.

ժգ/ բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացումը (տարանջատումը) և մեծացումը (համախմբումը).

ժդ/ գործարքների կնքումը «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67 հոդվածով նախատեսված դեպքերում.

ժե/ Ընկերության գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը «Բաժնետիրական Ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64 հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերում.

ժզ/ Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռք բերումը և հետզնումը.

ժէ/ Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը.

ժը/ Օրենսդրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

9.4. 9.3. հոդվածի «ա»-ից «ժէ» ենթակետերով սահմանված հարցերով որոշումների ընդունումը հանդիսանում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունը և չի կարող փոխանցվել Ընկերության տնօրենների խորհրդին:

Ընկերության ընդհանուր ժողովն իրավունք չունի քննարկել և որոշումներ ընդունել այն հարցերի շուրջ, որոնք չեն սահմանվել որպես Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասություն:

9.5. Բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկությունը կատարվում է հետևյալ սկզբունքով՝ մեկ բաժնետոմս - մեկ ձայն:

9.6. Ընդհանուր ժողովում կատարվում է բաց քվեարկություն:

9.7. Ընդհանուր ժողովը իրավագոր է, եթե նրա մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության ձայնի իրավունք տվող ոչ պակաս 75% տեղաբաշխված բաժնետոմսեր ունեցող Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները):

Եթե Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը տևում է մեկ օրից ավել, ապա յուրաքանչյուր օրվա համար կազմվում է ժողովի մասնակիցների գրանցման առանձին ցուցակ:

9.8. Բոլոր հարցերով որոշումները Ընկերության հիմնադիրների (բաժնետերերի) ընդհանուր ժողովում ընդունվում են ձայնի իրավունք տվող բաժնետոմս ունեցող և ժողովին մասնակցող բաժնետերերի ձայների 3/4-ով:

9.9. Ընդհանուր ժողովը գումարվում է ամեն տարի Ընկերության տնօրենների խորհրդի կողմից, հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո 2-ից 6 ամսյա ժամկետում հաջորդաբար՝ Հայաստանում և Ռուսաստանում: Ընկերության ընդհանուր տարեկան ժողովների միջև ժամանակահատվածը չպետք է գերազանցի 18 ամիսը:

Եթե Ընկերության տնօրենների խորհուրդը սույն կանոնադրությամբ սահմանված ժամկետում չի հրավիրում բաժնետերերի ընդհանուր ժողով, ապա նրա գումարումը և իրականացումը կարող է կազմակերպվել պետական ռեգիստրի մարմնի կողմից:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները, որոնք հրավիրվում են բաժնետերերի տարեկան ժողովից բացի, համարվում են արտահերթ:

Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Օրենսդրությամբ սահմանված կարգով:

9.10. Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Ընկերության խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, վերստուգող հանձնաժողովի,

Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության առնվազն 10% ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ պահանջով: Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարման վերաբերյալ Ընկերության տնօրենների խորհրդի որոշմամբ սահմանվում է բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարման ձևը՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով:

9.11. Ընդհանուր ժողովի քննարկման ենթակա որոշումները կարող են ընդունվել առանց ընդհանուր ժողովի անցկացման, նախնական տեղեկացմամբ և առանց քվեարկության, պայմանով, որ բոլոր բաժնետերերը գրավոր ձևով կարտահայտեն իրենց համաձայնությունը այդ որոշման նկատմամբ:

Սույն կանոնադրության 9.3. կետի ”ժ” ենթակետով սահմանված հարցերի վերաբերյալ որոշումը չի կարող ընդունվել հեռակա կարգով քվեարկությամբ:

9.12. Ընդհանուր ժողովի օրակարգը սահմանում և հաստատում է Ընկերության տնօրենների խորհուրդը:

9.13. Բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման, տեղի, ժամանակի, անցկացման և օրակարգի մասին Ընկերության տնօրենների խորհուրդը տեղեկացնում է բաժնետերերին ընդհուպ ժողովի անցկացման օրից ոչ ուշ քան 3 շաբաթ առաջ: Ընդհանուր ժողովի ընթացքի վերաբերյալ արձանագրություն է կազմվում, որը արվում է 15 օրվա ընթացքում, 2 օրինակից, որոնք ստորագրվում են ժողովի նախագահի և քարտուղարի կողմից:

## ՀՈԳՎԱԾ 10 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

10.1. Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարությունը բաժնետերերի ժողովների միջև ընկած ժամանակահատվածում իրականացնում է Ընկերության տնօրենների խորհուրդը, բացառությամբ այն հարցերի, որոնք պատկանում են նրա բացառիկ իրավասությանը: Ընկերության տնօրենների խորհուրդը ընտրվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից 7 հոգի կազմով (3 ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարությունից, 3 ներկայացուցիչ «Գ-ազպրոմ» ԲԲԸ-ից և 1 ներկայացուցիչ «Իտերա» -ից):

Ընկերությունը կազմում է Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ցուցակները, որոնք հասու են Ընկերության բաժնետերերին ծանոթացման համար և պարունակում են տվյալներ նախատեսված «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

10.2. Ընկերության տնօրենների խորհուրդը ընտրում է.

-Ընկերության խորհրդի նախագահին խորհրդի անդամների կազմից «Գ-ազպրոմ» ԲԲԸ-ի ներկայացմամբ.

-Ընկերության տնօրենների խորհրդի նախագահի տեղակալին՝ խորհրդի անդամների կազմից, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության ներկայացմամբ:

Ընկերության տնօրենների խորհրդի նախագահը և նախագահի տեղակալը ընտրվում են խորհրդի նիստին ներկա խորհրդի անդամների ձայների 3/4-ով:

10.3. Ընկերության տնօրենների խորհրդի անդամները իրենց պարտականությունների կատարման համար վարձատրվում են կամ ստանում են փոխհատուցում, կապված իրենց կողմից խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Վարձատրության կամ

փոխհատուցման չափը և վճարման կարգը սահմանվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:

10.4. Իր իրավասությանը պատկանող հարցերը Ընկերության տնօրենների խորհուրդը քննարկում է նիստերի ժամանակ, որոնք անցկացվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ:

Ընկերության տնօրենների խորհուրդը իրավասու է որոշումներ ընդունել, եթե նրա նիստերին մասնակցում են խորհրդի ոչ պակաս հինգ անդամ, և ներկայացված են բոլոր բաժնետերերը:

Ընկերության տնօրենների խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների 3/4-ով:

Քվեարկության ժամանակ Ընկերության տնօրենների խորհրդի անդամն ունի միայն մեկ ձայն: Չայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն Ընկերության տնօրենների խորհրդի մեկ անդամից խորհրդի մյուս անդամին չի թույլատրվում:

10.5. Ընկերության տնօրենների խորհրդի լիազորության տևողությունը մեկ տարի է (մինչև հաջորդ ընդհանուր ժողովը):

Ընկերության տնօրենների խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում: Բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է որոշում ընդունել Ընկերության տնօրենների խորհրդի ցանկացած անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

10.6. Ընկերության տնօրենների խորհրդի որոշումները կարող են ընդունվել առանց խորհրդի նիստի, հեռակա քվեարկությամբ (գրավոր ձևով):

10.7. Ընկերության տնօրենների խորհրդի գործունեության իրականացման կազմակերպումը և ձևը սահմանվում է նրա կանոնակարգով, որը հաստատվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

10.8. Ընկերության տնօրենների խորհրդի բացառիկ իրավասությանն է պատկանում.

ա/ Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.

բ/ Ընկերության բաժնետերերի ընդհանուր և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ այն դեպքերի որոնք սահմանված են «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77 հոդվածի 6-րդ կետով:

գ/ Ընկերության գործադիր մարմնի (Գլխավոր տնօրեն, վարչություն) ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

դ/ ընդհանուր ժողովի օրակարգի հաստատումը.

ե/ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և գումարման հետ և տրված են Ընկերության տնօրենների խորհրդի իրավասությանը:

զ/ սույն կանոնադրության 9 հոդվածի 9.3. կետի «բ», «ժբ»-ից «ժգ» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումն Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի քննարկմանը.

է/ պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը.

ը/ գույքի շուկայական արժեքի որոշումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62 հոդվածով սահմանված կարգով.

թ/ Ընկերության վերստուգող հանձնաժողովի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի պայմանների վերաբերյալ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.

ժ/ Ընկերության աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափի սահմանումը.

ժա/տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.

ժբ/ միջանկյալ շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.

ժգ/ Ընկերության պահուստային ֆոնդի օգտագործումը.

ժդ/ Ընկերության կառավարման մարմինների (բացառությամբ Ընկերության տնօրենների խորհրդի կանոնակարգի) գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

ժե/ Ընկերության վարչակազմակերպչական կառուցվածքի հաստատումը.

ժզ/ ամենամյա ծախսերի նախահաշվի հաստատումը.

ժէ/ դուստր ընկերությունների ստեղծումը, դուստր և կախյալ ընկերություններում մասնակցությունը.

ժը/ Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը.

ժթ/ այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունը իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.

ի/ Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում.

իա/ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ գլխով նախատեսված գործարքների կնքումը.

իբ/ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

10.9. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է որոշում ընդունել իր իրավասության ենթակա առանձին ֆունկցիաները Ընկերության տնօրենների խորհրդին փոխանցելու մասին, հաշվի առնելով սույն կանոնադրության 9.4. կետի պահանջները:

10.10. Ընկերության տնօրենների խորհրդի ղեկավարները և անդամները չեն կարող լինել Ընկերության վարչության անդամներ:

## ՀՈԴՎԱԾ 11

### ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ

11.1. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Գլխավոր տնօրենը Ընկերության վարչության հետ համատեղ: Այդ մարմինները կազմակերպում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի և Ընկերության տնօրենների խորհրդի որոշումների կատարումը:

Ընկերության վարչությունը նշանակվում է Ընկերության խորհրդի կողմից 7 անդամ կազմով (երեք ներկայացուցիչ «Գազպրոմ» ԲԲԸ-ի կողմից, երեք ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության կողմից և մեկ ներկայացուցիչ «Իտերա»-ի կողմից):

Գլխավոր տնօրենը նշանակվում է Ընկերության տնօրենների խորհրդի կողմից, Ընկերության վարչության անդամների թվից՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության առաջադրմամբ:

Գլխավոր տնօրենը կատարում է Ընկերության վարչության նախագահի պարտականությունները:

Վարչության նախագահի տեղակալը նշանակվում է Ընկերության խորհրդի կողմից «Գազպրոմ» ԲԲԸ-ի առաջադրմամբ:

Գլխավոր տնօրենի հետ պայմանագիրը Ընկերության անունից կնքում է Ընկերության տնօրենների խորհրդի նախագահը:

11.2. Ընկերության Գլխավոր տնօրենը (վարչության նախագահը).

ա/ տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից, բացառությամբ խոշոր գործարքների, Օրենսդրության համապատասխան:

բ/ ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում:

գ/ գործում է առանց լիազորագրի:

դ/ տալիս է լիազորագրեր:

ե/ սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային:

զ/ բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ տարադրամային) և այլ հաշիվներ:

է/ Ընկերության տնօրենների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության վարչության աշխատանքային կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը:

ը/ իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:

թ/ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին:

ժ/ աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

11.3. Ընկերության վարչությունը ընդունում է որոշումներ Ընկերության գործունեության բոլոր հարցերի վերաբերյալ, բացառությամբ այն հարցերի, որոնք պատկանում են ընդհանուր ժողովի, Ընկերության տնօրենների խորհրդի և գործադիր տնօրենի իրավասությանը:

11.4. Ընկերության վարչությունը գործում է սույն կանոնադրության, ինչպես նաև Ընկերության տնօրենների խորհրդի կողմից հաստատված վարչության կազմը, նրա նիստերի գումարման, անցկացման և որոշումներ ընդունելու կարգը սահմանող վարչության գործունեության կանոնակարգի հիման վրա:

11.5. Ընկերության վարչության նիստերը հրավիրվում են վարչության նախագահի կողմից ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ:

11.6. Ընկերության խորհրդի անդամները, Ընկերության Գլխավոր տնօրենը, Ընկերության վարչության անդամները Ընկերության առջև Օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասների համար:

Ընկերությանը հասցված վնասի դիմաց պատասխանատվությունից ազատվում են Ընկերության տնօրենների խորհրդի կամ վարչության այն անդամները, որոնք Ընկերությանը վնասներ պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել կամ նիստին ներկա չեն գտնվել: Ընկերության տնօրենների խորհրդի կամ վարչության անդամի հրաժարականը կամ պաշտոնից հեռ կանչելը կամ ազատելը չի ազատում նրան Ընկերությանը հասցրած վնասի համար պատասխանատվությունից:

## ՀՈՂՎԱԾ 12

### ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

12.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնում է վերստուգող հանձնաժողովը, որը ընտրվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի

կողմից 3 տարի ժամկետով, երեք հոգի կազմով՝ մեկական ներկայացուցիչ յուրաքանչյուր հիմնադրի կողմից:

Վերստուգող հանձնաժողովի նախագահն ընտրվում է վերստուգիչ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, «ԻՏԵՐԱ»-ի ներկայացմամբ:

Վերստուգող հանձնաժողովի անդամները հաշվետու են Ընկերության հիմնադիրների ընդհանուր ժողովին:

12.2. Վերստուգող հանձնաժողովի անդամների վարձատրության կամ վճարվող փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:

12.3. Վերստուգող հանձնաժողովի գործունեության կարգը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատվող վերստուգող հանձնաժողովի կանոնակարգով:

12.4. Վերստուգող հանձնաժողովը Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումը իրավունք ունի իրականացնել սեփական նախաձեռնությամբ, Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, ինչպես նաև բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

12.5. Վերստուգող հանձնաժողովը ինքնուրույն, առանց որևէ միջամտության իր գործունեության մեջ, ստուգում է Ընկերության հաշվապահական փաստաթղթերը, հաշվետվությունների համապատասխանությունը գործող օրենքներին և այլ նորմատիվ ակտերին, վարչության հաշվետվության տեղեկատվության, տարեկան հաշվեկշռի ճշտությունը և ճշգրտությունը:

12.6. Ընկերության պաշտոնատար անձինք և աշխատակիցները պարտավոր են վերստուգող հանձնաժողովին տրամադրել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստուգումները անցկացնելու համար:

12.7. Ընկերության գործունեության հաշվետվության և տարեկան հաշվեկշռի ստուգման արդյունքների վերաբերյալ եզրակացությունը վերստուգող հանձնաժողովը ներկայացնում է բաժնետերերի ընդհանուր ժողովին:

12.8. Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամները իրավունք ունեն մասնակցել Ընկերության վարչության նիստերին առանց ձայնի իրավունքի:

12.9. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է որոշում ընդունել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում անցկացնելու մասին ինչպես վերստուգող հանձնաժողովի կողմից, այնպես էլ անկախ աուդիտորական ծառայության (աուդիտորի) կողմից:

12.10. Առանց ստուգումը անցկացնող վերստուգող հանձնաժողովի կամ անկախ աուդիտորական ծառայության եզրակացության, ընդհանուր ժողովը իրավունք չունի հաստատել Ընկերության հաշվեկշիռը:

12.11. Վերստուգող հանձնաժողովը պարտավոր է պահանջել ընդհանուր ժողովի արտահերթ գումարում Ընկերության շահերին սպառնալիք առաջանալու կամ Ընկերության ղեկավարության կողմից չարաշահումներ հայտնաբերելու դեպքում:



12.12. Վերստուգող հանձնաժողովը պատասխանատու չէ վարչության անդամների, ինչպես նաև ենթակա կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարված խախտումների համար, բացառությամբ այն դեպքերի, եթե վերստուգող հանձնաժողովը տեղյակ է եղել նշված խախտումների մասին, բայց չի տեղեկացրել այդ մասին Ընկերության տնօրենների խորհրդին և / կամ ընդհանուր ժողովին:

### ՀՈԳՎԱԾ 13 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՅՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

13.1. Ընկերությունն ունի ներկայացուցչություն Ռուսաստանի Դաշնության տարածքում՝ ք.Մոսկվայում, Վատուտինի փ. 3/1, թիվ 20:

### ՀՈԳՎԱԾ 14 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՅՈՒՄԸ

14.1. Ընկերության գործունեության դադարեցումը կարող է իրականացվել վերակազմակերպման և լուծարման միջոցով:

14.2. Ընկերությունը կարող է կամավոր վերակազմակերպվել միաձուլման, միացման, բաժանման, առանձնացման, վերափոխման միջոցով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

14.3. Ընկերությունը համարվում է վերակազմակերպված, նոր առաջացած իրավաբանական անձանց պետական գրանցման պահից:

Ընկերությունն այլ Ընկերության միացման միջոցով վերակազմակերպման դեպքում առաջինը համարվում է վերակազմակերպված, պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից այդ Ընկերության գործունեության դադարման մասին գրանցումը կատարելու պահից:

14.4. Ընկերության լուծարումը հանգեցնում է Ընկերության գործունեության դադարմանը առանց Ընկերության իրավունքների և պարտականությունների իրավահաջորդության կարգով փոխանցման այլ անձանց:

Ընկերության լուծարման հիմքերն են.

ա/ Ընկերության կանոնադրությամբ նախատեսված գործունեության ժամկետի լրանալը կամ այն նպատակին հասնելը, հանուն որի Ընկերությունը ստեղծվել էր, կամ դատարանի կողմից Ընկերության պետական գրանցումն անվավեր ճանաչելը.

բ/ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից Ընկերությունն առանց իրավահաջորդի լուծարելու մասին ընդունված որոշումը.

գ/ Ընկերությունը սնանկ հայտարարելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումը.

դ/ Ընկերության լուծարման մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումը՝ օրենքով նախատեսված դեպքերում.

ե/ Օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով:

Ընկերության լուծարման դեպքում նրա ամբողջ գույքը (կամ նրա արժեքը), և պարտադիր վճարումներից ու պարտավորությունների կատարումից հետո մնացած միջոցները բաշխվում են բաժնետերերի միջև կանոնադրական կապիտալում իրենց մասնաբաժիններին համամասնորեն:

14.5. Մինչև Ընկերության գործունեության դադարեցումը նրա պարտականությունները կատարում է լուծարային հանձնաժողովը:

14.6. Ընկերության լուծարման կարգը և վարկատուների հետ հաշվարկները ավարտելուց հետո մնացած գույքի բաշխումը սահմանվում է «Բաժնետիրական Ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

14.7. Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, երբ լուծարային հանձնաժողովը գրանցում է Ընկերության գործունեության դադարումը Օրենսդրությամբ սահմանված կարգով:

## ՀՈԴՎԱԾ 15 ԵԶՐԱՓՈՎԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15.1. Ընկերության տնտեսական գործունեության իրականացման ժամանակ Ընկերության պաշտոնատար անձինք և Ընկերության անձնակազմը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում խստորեն պահպանել օրինական ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջկառավարական և այլ համաձայնագրերի դրույթները:

15.2. Սույն կանոնադրությամբ չնախատեսված հարցերը լուծվում են համաձայն Օրենսդրության:

### ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության  
Էներգետիկայի Նախարարություն  
Հայաստան, 375010, ք. Երևան  
Հանրապետության Հրապարակ,  
Կառավարական տուն 2,  
հեռ. (8852) 52-19-64  
AT&T (3742) 151-687  
ֆաքս (8852) 52-63-65

Բաց բաժնետիրական  
ընկերություն «Գ-ազպրոմ»  
Ռուսաստան, 117884, ԳՍՊ  
ք. Մոսկվա, Վ-420  
Նամյոտկինի փող., 16  
հեռ. (095) 719-30-01  
ֆաքս (095) 719-83-33


«ITERA International Energy, L.L.C.»  
10151 Deerwood Park Blvd, Bldg. 100,  
Suit 410 Jacksonville, Florida 32256, USA  
Փոստային հասցեն.

Ռուսաստան, 113209, ք. Մոսկվա,  
Սևոստոպոլյան պողոտա 28, 1 մասնաշենք  
հեռ. (095) 258-4377/4378, 961-43-79  
ֆաքս (095) 258-4365/4367, 961-32-79

Տպագրված է ընդամենը 5 օրինակ  
Օրինակ 3

ԸՆԴՈՒՆՎԱԾ Է


Տնօրենների կոլեգիայի  
26. 11. 2001թ. N 9.2/18-2001  
և 30. 05. 2003թ. N 72/18-2003  
որոշումներով



ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության  
իրավաբանական անձանց  
պետական ռեգիստրում  
«16» 07 2003թ.

գրանցման թիվ 264.120.04128  
վկայական թիվ 0116 039934  
պետական ռեգիստրի շեքավիճակի  
տարածքային բաժնի պետ  
Ս. Երեմյան  
18.07.03թ.



ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ «ՀԱՅՈՒՐԱԳԱԶԱՐԴ»  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ Ա Ն  
փոփոխություն

1. Կանոնադրության 13-րդ հոդվածում կատարել փոփոխություն՝ լրացնել նոր 13.2. կետով՝ հետևյալ խմբագրությամբ՝

1. «13.2. ՀՀ տարածքում ընկերությունն ունի «Ինժեներական կենտրոն» մասնաճյուղը (հասցեն՝ ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 43) ու գազիֆիկացման և գազամատակարարման (ԳԳՄ) հետևյալ մասնաճյուղերը՝

- |                  |  |
|------------------|--|
| - Երևանի ԳԳՄ     | - ք. Երևան, Չարենցի 141ա,                              |
| - Շիրակի ԳԳՄ     | - Շիրակի մարզ, գ. Մխուրյան,                            |
| - Գյումրիի ԳԳՄ   | - Շիրակի մարզ, ք. Գյումրի, Չայկովսկու փողոց, 2,        |
| - Լոռիի ԳԳՄ      | - Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տարոն – 3,                   |
| - Աբովյանի ԳԳՄ   | - Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Սևանի փողոց, 16,           |
| - Կոտայքի ԳԳՄ    | - Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Շահումյան փողոց, 10,       |
| - Գավառի ԳԳՄ     | - Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Դաշտոյան փողոց, 1,      |
| - Մարտունու ԳԳՄ  | - Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Երևանյան փողոց, 37,  |
| - Սևանի ԳԳՄ      | - Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Նաիրյան փողոց, 154,      |
| - Արարատի ԳԳՄ    | - Արարատի մարզ, ք. Վեդի, Պուշկինի փողոց, 1,            |
| - Արտաշատի ԳԳՄ   | - Արարատի մարզ, ք. Արտաշատ, Շահումյան փողոց, 29,       |
| - Արագածոտնի ԳԳՄ | - Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Երևանյան փողոց, 3ա,     |
| - Արմավիրի ԳԳՄ   | - Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Հանրապետության փողոց, 13, |
| - Էջմիածնի ԳԳՄ   | - Արմավիրի մարզ, գ. Ծաղկունք,                          |
| - Վայոց Ձորի ԳԳՄ | - Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Երևանյան խճուղի, 5,   |
| - Սյունիքի ԳԳՄ   | - Սյունիքի մարզ, ք. Կապան, Գործարանային փողոց, 16,     |
| - Տավուշի ԳԳՄ    | - Տավուշի մարզ, ք. Իջևան, Սեիրաբյան փողոց, 53,         |

Սույն փոփոխությունը հանդիսանում է 16.06.2000թ. գրանցված Հայ-ռուսական «Հայնուսգազարդ» ՓԲԸ նոր խմբագրությամբ կանոնադրության անբաժանելի մասը:

ք. ԵՐԵՎԱՆ 2003թ.

657

Կազմված է 05.05.2006 թ. համարակազմ է 2 թերթի  
Տպագրված է ցերեպները 5 տրինալ

ՕՐԻՆԱԿ 2

**Հ Ա Ս Ս Ա Տ Վ Ա Ճ Է**

«ՀԱՅՈՒՄԱԳԱԶԱՐԴ» ՓԲԸ «ԳԱԶԱՐԳՆԵՐՎԻՍ»  
ՍՊԸ մասնակիցների, «ՀԱՅՈՒՄԱԳԱԶԱՐԴ» ՓԲԸ  
«ՈՒՍՈՒՄՆԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ  
մասնակիցների, «ՀԱՅՈՒՄԱԳԱԶԱՐԴ» ՓԲԸ  
«ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՄԵՏԱՂԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ»  
ՍՊԸ մասնակիցների և Հայ-ռուսական  
«ՀԱՅՈՒՄԱԳԱԶԱՐԴ» ՓԲԸ բաժնետերերի  
05.05.2006 թ. կայացած համատեղ ընդհանուր  
ժողովի թիվ 2.1 որոշմամբ  
(արձանագրություն թիվ 11-3)

Հայ-ռուսական «ՀԱՅՈՒՄԱԳԱԶԱՐԴ» ՓԲԸ

գլխավոր

*Գ. Գրիգորյան*  
"05"




**Գ Ր Ա Ն Յ Վ Ա Ճ Է**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՁԵՆՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 30.12.1997 թ.

գրանցման թիվ 264.120.04128  
վկայական 01 Ա 039934

Թիվ 004-3 փոփոխությունը  
գրանցված է պետական ռեգիստրի  
կենտրոնական մարմնի կողմից  
"27" 06 2006 թ.

պետական ռեգիստրի ղեկավար՝



**Հայ-ռուսական «ՀԱՅՈՒՄԱԳԱԶԱՐԴ»**

փակ բաժնետիրական ընկերության

**Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

(փոփոխություն)

Հայ-ռուսական «ՀԱՅՈՒՄԳԱԶԱՐԴ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ լրացումը:

Կանոնադրության 1.1. կետից հետո ավելացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողեր.

«ՀԱՅՈՒՄԳԱԶԱՐԴ» ՓԲԸ «ԳԱԶԱՐԴՍԵՐՎԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների, ՈՒՍՈՒՄՆԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների, ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՄԵՏԱԴՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների և Հայ-ռուսական «ՀԱՅՈՒՄԳԱԶԱՐԴ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի 05.05.2006 թ. կայացած համատեղ ընդհանուր ժողովի որոշման համաձայն կատարվել է «ՀԱՅՈՒՄԳԱԶԱՐԴ» ՓԲԸ «ԳԱԶԱՐԴՍԵՐՎԻՍ», «ՀԱՅՈՒՄԳԱԶԱՐԴ» ՓԲԸ «ՈՒՍՈՒՄՆԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» և «ՀԱՅՈՒՄԳԱԶԱՐԴ» ՓԲԸ «ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՄԵՏԱԴՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների միացում ընկերությանը:

Ընկերությունը հանդիսանում է «ՀԱՅՈՒՄԳԱԶԱՐԴ» ՓԲԸ «ԳԱԶԱՐԴՍԵՐՎԻՍ» ՍՊԸ (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 25.06.1999 թ., գրանցման թիվ՝ 264.110.04750, վկայական՝ 02 Ա 045581, գտնվելու վայրը՝ ք. Երևան, Թբիլիսյան խճուղի, թիվ 43), «ՀԱՅՈՒՄԳԱԶԱՐԴ» ՓԲԸ «ՈՒՍՈՒՄՆԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 28.06.1999 թ., գրանցման թիվ՝ 282.110.03628, վկայական՝ 02 Ա 045583, գտնվելու վայրը՝ ք. Երևան, Ն/Նորքի 8-րդ զանգված, նախկին «Անի» մսուր-մանկապարտեզի շենք) և «ՀԱՅՈՒՄԳԱԶԱՐԴ» ՓԲԸ «ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՄԵՏԱԴՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 30.06.1999 թ., գրանցման թիվ՝ 282.110.03631, վկայական՝ 02 Ա 045589, գտնվելու վայրը՝ ք. Երևան, Ուրբինյանց 27/3) իրավահաջորդը՝ փոխանցման ակտերին համապատասխան:»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է Հայ-ռուսական «ՀԱՅՈՒՄԳԱԶԱՐԴ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության (գրանցված 16.06.2000 թ., փոփոխությունները գրանցված են 29.09.2000 թ.16.07.2003 թ.) բաղկացուցիչ մասը:

Թարգմանված է տուերենից

Հավելված № 1

«Հայրուսգազարդ» ՓԲԸ-ի Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր Ժողովի Արձանագրության առ 05.09.2006թ.

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

Օրինակ № 3

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

«Հայրուսգազարդ» ՓԲԸ-ի Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր ժողովի կողմից 05.09.2006թ.

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ կողմից 07.01.1998թ. Գրանցման համարը՝ 264.120.04128 Վկայականի համարը՝ 01 A03993

Թ. 5 փոփոխությունը գրանցված է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Արաբկիր տարածքային բաժնի կողմից 20.11. 2006թ.

Արաբկիր տարածքային բաժնի պետ

Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր ժողովի նախագահ /ստորագրություն/ Ա.Լ.Սիխեև Կ Ն Ի Ք

 Ա. Հովհաննիսյան 20.11.06թ

**ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ «ՀԱՅՌՈՒՄԳԱԶԱՐԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ**

**Փ Ո Փ Ո Ւ Ն Ո Ւ Թ Յ ՈՒ Ն № 2006-1**

1. Ընկերության Կանոնադրության 4-րդ Հոդվածի 4.1 կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4.1. Ընկերության Կանոնադրական կապիտալը կազմում է 140 742 000 000 Հայաստանի Հանրապետության դրամ:

Կանոնադրական կապիտալը բաժանված է 28 000 000 սովորական անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 5 026,5 դրամ անվանական արժեքով:

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարությանը պատկանում է 12 600 000 հատ սովորական անվանական բաժնետոմսեր՝ 63 333 900 000 դրամ գումարով, որը կազմում է Կանոնադրական նաահտաւի 45 տոկոս:

«Գազպրոմ» ԲԲԸ-ին պատկանում է 12 600 000 հատ սովորական անվանական բաժնետոմսեր՝ 63 333 900 000 դրամ գումարով, որը կազմում է Կանոնադրական կապիտալի 45 տոկոսը:

«ԻՏԵՐՎ»-ին պատկանում է 2 800 000 հատ սովորական անվանական բաժնետոմսեր՝ 14 074 200 000 դրամ գումարով, որը կազմում է Կանոնադրական կապիտալի 10 տոկոսը:»

**2. Ընկերության Կանոնադրության 4-րդ Հոդվածի 4.3 կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ՝**

Մենք առողիտն անցկացրեցինք ՀՀ Առողիտի ստանդարտներին (առողիտի ազգային ստանդարտներին և գործնական փորձին) համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք առողիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Առողիտորական աշխատանքները ներառում են թեսթային հիմունքներով այն ապացույցների հետազոտումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը և բացահայտումը: Առողիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտների սկզբունքների գնահատումը, ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված առողիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով Հայ-Ռուսական «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ 2007թ. ֆինանսական հաշվետվությունները պարունակում են հավաստի ու արժանահավատ տեղեկատվություն և տույիս են ճշմարիտ և իրական պատկերը համաձայն ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտների և հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության:

Իրականացված առողիտորական աշխատանքների արդյունքում մենք արտահայտում ենք դրական կարծիք:

ՀԱՅ – ՌՈՒՍԱԿԱՆ «ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԲԸ պատասխանատու է ներկայացրած փաստաթղթերի պատրաստման և հավաստիության համար:

«ԲՅԱՎԱՌ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ն պատասխանատու է իր տված առողիտորական եզրակացության, իրեն տրամադրված տեղեկությունների գաղտնիության ապահովման համար:

Առողիտի ղեկավար



Երևանի հարկային



**ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N IB / 08- 002**

ք.Երևան

« 20 » մայիսի 2008թ.

«Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս Վարչության նախագահ-Գլխավոր տնօրեն Կարեն Կարապետյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ), ի դեմս Գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյանի, որը գործում է Բանկի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, միասին անվանվելով նաև Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

1.1. Սույն պայմանագրով Բանկի հետ համագործակցություն ձևավորելու միջոցով Ընկերությունը մտադիր է թողարկել և տեղաբաշխել 1 000 000 000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով պարտատոմսեր (այսուհետև՝ պարտատոմսեր) հետևյալ պայմաններով.

- 1.1.1. **Պարտատոմսի դասը** Անվանական արժեկտրոնային պարտատոմս
- 1.1.2. **Պարտատոմսի ձևը** Ոչ փաստաթղթային
- 1.1.3. **Պարտատոմսի այլ բնութագրիչները** Ոչ փոխարկելի և առանց վաղաժամկետ մարման իրավունքի
- 1.1.4. **Պարտատոմսերի արժեկտրոնային եկամտաբերությունը** տարեկան 9.5%
- 1.1.5. **Շրջանառության ժամկետը** 36 ամիս
- 1.1.6. **Շրջանառության ձևը** Ազատ շրջանառության իրավունքով
- 1.1.7. **Տեղաբաշխման ենթակա ծավալը** 1 000 000 000 ՀՀ դրամ
- 1.1.8. **Տեղաբաշխման եղանակը** Երաշխավորված
- 1.1.9. **Արժեկտրոնի (տոկոսագումարների) վճարման պարբերականությունը** Արժեկտրոնների (տոկոսագումարների) վճարումը կատարվում է տեղաբաշխման առաջին օրվանից հետո կիսամյակային պարբերականությամբ:
- 1.1.10. **Տեղաբաշխման գնի որոշման բանաձև** 
$$P = \frac{N}{(1+t * R / m)} * \left\{ c * \sum_{j=1}^n \frac{1}{(1+R)^{j-1}} + \frac{1}{(1+R)^{n-1}} \right\}$$

որտեղ՝

- P – պարտատոմսի հաշվարկված (տեղաբաշխման) գինն է,
- N – պարտատոմսի անվանական արժեքն է,
- R – պարտատոմսի ներդրումային եկամտաբերության կիսամյակային տոկոսադրույքն է,



- t – մինչև տվյալ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակն է,
  - m – ընթացիկ կիսամյակում ընդգրկված օրերի քանակն է,
  - c – կիսամյակային վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է,
  - n – մնացած արժեկտրոնների վճարումների քանակն է, ընդ որում n արժեքը պարտատոմսի շրջանառության ընթացքում փոփոխվում է ըստ նվազման, այսինքն՝ 6-1 միջակայքում:
  - j – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոփոխվում է տվյալ պահից մինչև վերջնական մարում մնացած արժեկտրոնների վճարումների քանակից կախված, ընդ որում՝ j արժեքը փոփոխվում է ըստ աճման և ընդունում է 1-ն արժեքները (երբ n-ը ընդունում է 1 արժեք, j-ն նույնպես ընդունում է 1 արժեքը):
- 1.2. Հիմք ընդունելով ֆինանսական շուկայում ներկայիս ձևավորված տոկոսադրույքների մակարդակը, Ընկերությունը պատրաստակամ է տեղաբաշխել պարտատոմսերը 10% եկամտաբերության պայմանով, այսինքն՝ սույն պայմանագրի 1.1.10. կետով սահմանված պարտատոմսերի տեղաբաշխման գնի որոշման բանաձևում R-ը (պարտատոմսի ներդրումային եկամտաբերության կիսամյակային տոկոսադրույքը) հաշվարկել 5%:

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

- 2.1. Սույն պայմանագրով Բանկը պարտավորվում է Ընկերությանը մատուցել պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման հետ կապված սույն պայմանագրի 2.2. կետում նշված ծառայությունները, իսկ Ընկերությունը պարտավորվում է սույն պայմանագրի 4.2. կետով սահմանված կարգով վճարել այդ ծառայությունների համար:
- 2.2. Բանկը Ընկերությանը մատուցում է հետևյալ ծառայությունները՝
- 2.2.1. գնահատում է Ընկերության ֆինանսատնտեսական վիճակը,
  - 2.2.2. Ընկերության կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա նախապատրաստում է պարտատոմսերի ազդագիրը,
  - 2.2.3. պարտատոմսերի ազդագրի գրանցման ընթացքում Ընկերության հետ համատեղ ներկայացնում է Ընկերության շահերը պետական լիազոր մարմնում,
  - 2.2.4. Ընկերության հետ համատեղ կազմակերպում է պարտատոմսերի տեղաբաշխման հետ կապված մարքեթինգային աշխատանքներ (գովազդային ակցիաներ, բուկլետների պատրաստում, ազդագրի տարածման աշխատանքներ և այլն), որոնց հետ կապված ֆինանսական ծախսերը չեն մտնում սույն պայմանագրով նախատեսված պայմանագրի գումարի մեջ,
  - 2.2.5. կազմակերպում է պարտատոմսերի առաջնային տեղաբաշխումը երաշխավորված եղանակով: Պարտատոմսերի տեղաբաշխման կազմակերպման նպատակով Բանկը՝
    - ա) իրավունք ունի ձևավորել տեղաբաշխողների խումբ (սինդիկատ)՝ համապատասխան համաձայնագիր կնքելու միջոցով (պարտատոմսերի երաշխավորված տեղաբաշխման շրջանակում),
    - բ) կազմակերպում է պարտատոմսերի ազատ բաժանորդագրություն՝ իր կողմից սահմանված կարգին համապատասխան: Ընկերության կողմից տեղաբաշխվող պարտատոմսերը տեղաբաշխվում են Բանկի կողմից սահմանված՝ պարտատոմսերի բաժանորդագրության կազմակերպման կարգին համապատասխան:
    - գ) ձեռնարկում է անհրաժեշտ գործողություններ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում (այսուհետև՝ ՀԿԴ) պարտատոմսերը Ընկերության թողարկման հաշվից գնորդների համապատասխան հաշիվներին փոխանցելու կապակցությամբ: Տեղաբաշխման ընթացքում ՀԿԴ-ի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարները կատարում է Ընկերությունը՝ ՀԿԴ-ի կանոններով սահմանված կարգով,
    - դ) տեղաբաշխման ավարտից հետո ամփոփում է տեղաբաշխման արդյունքները և նախապատրաստում է տեղաբաշխման արդյունքների մասին օրենքով սահմանված հաշվետվությունը,



- 2.2.6. Ընկերության հետ համատեղ կազմակերպում է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում (այսուհետև՝ ՀՖԲ) պարտատոմսերի առևտրին թույլատրություն ստանալու գործընթացը, այդ թվում նաև՝ նախապատրաստում է առևտրի ազդագիրը,
- 2.2.7. պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման ընթացքում Բանկը Ընկերությանը մատուցում է արժեկտրոնների վճարման և պարտատոմսերի մարման հետ առնչվող հաշվարկային ծառայություններ՝ Բանկի կողմից սահմանված կարգով և պայմաններով,
- 2.2.8. պարտատոմսերի իրացվելության ապահովման նպատակով ՀՖԲ-ում պարտատոմսերով առևտրի ընթացքում Բանկը հանդես է գալիս որպես շուկա ստեղծող՝ ՀՖԲ-ի կանոններով սահմանված կարգով: Բանկն ազատվում է պարտադիր գնանշում կատարելու պարտավորությունից, եթե նրա կողմից տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կատարվել է ՀՖԲ-ի կանոններով սահմանված նվազագույն չափի ծավալի գործարքներ: Բանկի կողմից կատարվող պարտադիր գնանշումները պետք է նպատակաուղղված լինեն շուկայում պարտատոմսերի իրացվելիության ապահովմանը, ինչպես նաև պարտատոմսերի կայուն և հիմնավորված գների ձևավորմանը՝ հաշվի առնելով շուկայում ձևավորված իրավիճակը:

### **3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

#### **3.1. Ընկերությունն իրավունք ունի՝**

- 3.1.1. ցանկացած ժամանակ ստուգել Բանկի կողմից սույն պայմանագրով մատուցվող ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Բանկի գործունեությանը,
- 3.1.2. ողջամիտ և օրենքին չհակասող ցուցումներ տալ Բանկին՝ ծառայության մատուցման /փաստաթղթերի կազմման և դրանց բովանդակության/ վերաբերյալ,
- 3.1.3. ծառայության մատուցման ընթացքի վերաբերյալ հաշվետվություն պահանջել Բանկից,

#### **3.2. Ընկերությունը պարտավոր է՝**

- 3.2.1. սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում Բանկին վճարել ծառայությունների դիմաց,
- 3.2.2. Բանկի պահանջով ողջամիտ ժամկետներում տրամադրել նրա կողմից մատուցվող ծառայությունների համար անհրաժեշտ ցանկացած տեղեկատվություն, ինչպես նաև Բանկի պահանջով Բանկին ներկայացնել անհրաժեշտ փաստեր և հիմնավորումներ Ընկերության կողմից պարտատոմսերի ազդագրում և պարտատոմսերի գրանցման հայտարարագրում բացահայտման ենթակա տեղեկատվության արժանահավատության և լիարժեքության վերաբերյալ,
- 3.2.3. փոխհատուցել Բանկին ներկայացված անարժանահավատ և խեղաթյուրված (բաց թողնված) տեղեկատվության բացահայտման հետևանքով Բանկի կրած այն վնասները, որոնք առաջացել են պետական լիազորված մարմինների կամ պարտատոմսերի ներդրողների պահանջով,
- 3.2.4. Բանկին տալ լիազորագրեր սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար,
- 3.2.5. Բանկի պահանջով կատարել սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ այլ գործողություններ,
- 3.2.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում չփոփոխել թողարկված պարտատոմսերի թողարկման պայմանները և չկատարել այնպիսի գործողություններ, որոնք կսահմանափակեն տեղաբաշխման ընթացքը կամ կվատթարացնեն պարտատոմսերի տեղաբաշխման և շրջանառության պայմանները,
- 3.2.7. Բանկին ներկայացնել տեղեկատվություն ՀՀ կենտրոնական բանկ և ՀՖԲ ներկայացվող տեղեկությունների և/կամ փաստաթղթերի լրացումների և փոփոխությունների (ընթացիկ, եռամսյակային և տարեկան հաշվետվությունների) և դրանց բովանդակության վերաբերյալ:



### **3.3. Բանկն իրավունք ունի՝**

- 3.3.1. պահանջել Ընկերությունից կատարելու սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները,
- 3.3.2. ստանալ և օգտագործել սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար Ընկերության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները, ինչպես նաև այդ տեղեկությունների արժանահավատության և լիարժեքության (ամբողջականության) վերաբերյալ լրացուցիչ հիմնավորումներ և փաստարկներ,
- 3.3.3. սույն պայմանագրի 1.2. կետով սահմանված ծառայությունների կատարման ընթացքում Ընկերության հետ կազմակերպել աշխատանքային հանդիպումներ և քննարկել այնպիսի հարցեր, որոնք պահանջում են հրատապ լուծումներ,
- 3.3.4. իր կողմից մատուցված ծառայությունների դիմաց ստանալ վարձատրություն՝ սույն պայմանագրով սահմանված կարգով, ժամկետներում և չափով:

### **3.4. Բանկը պարտավոր է՝**

- 3.4.1. ծառայությունների մատուցումը սկսել ոչ ուշ, քան սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու և Ընկերության կողմից անհրաժեշտ փաստաթղթերը բանկին տրամադրելու հաջորդ օրվանից,
- 3.4.2. պատշաճ որակով մատուցել սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները,
- 3.4.3. ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով և ողջամիտ ժամկետներում,
- 3.4.4. անկախ տեղաբաշխման արդյունքում պարտատոմսերի տեղաբաշխման փաստից, ձեռք բերել 1.1.7. կետում նշված տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ամբողջ ծավալը՝ սույն պայմանագրի 1.1.10 ենթակետով սահմանված տեղաբաշխման գնի բանաձևով որոշված գնով:
- 3.4.5. Տեղաբաշխման ավարտից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությանը ներկայացնել տեղաբաշխման ընթացքում պարտատոմսերով կատարված գործարքների վերաբերյալ համապատասխան հաշվետվություն,
- 3.4.6. ԴՖԲ-ում պարտատոմսերի ցուցակումից հետո յուրաքանչյուր ամսվա համար Ընկերությանը տրամադրել պարտատոմսերով կատարված գործարքների ծավալների և գների վերաբերյալ տեղեկատվություն:

## **4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

- 4.1. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների դիմաց Ընկերությունը Բանկին վճարում է պարտատոմսերի թողարկման ծավալի (պարտատոմսերի անվանական արժեքների հանրագումարի) 1.05%-ի չափով գումար, որը կազմում է 10 500 000 (տաս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից՝
  - ա) 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամը սույն պայմանագրի 2.2.1-2.2.3., 2.2.6. կետերով նախատեսված ծառայությունների համար և 2.2.4. կետում նշված կազմակերպչական աշխատանքների համար,
  - բ) 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ՝ սույն պայմանագրի 2.2.5. կետով նախատեսված ծառայությունների համար,
  - գ) 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ սույն պայմանագրի 2.2.8. կետով նախատեսված ծառայությունների համար:
- 4.2. Սույն պայմանագրի 4.1. կետով Բանկին վճարվող գումարներն ԱԱՀ-ով չեն հարկվում համաձայն ՀՀ օրենսդրության:
- 4.3. Ընկերությունը 4.1. կետում նշված գումարը վճարում է հետևյալ փուլերով՝
  - ա) 3 500 000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ վճարվում է որպես կանխավճար՝ սույն պայմանագրի կնքման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում,
  - բ) 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ վճարվում է 2.2.5. ենթակետով սահմանված ծառայությունները մատուցելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում,
  - գ) 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ վճարվում է 2.2.6. ենթակետով սահմանված ծառայությունները մատուցելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:



- 4.4. Յուրաքանչյուր փուլի ավարտից հետո Կողմերը կնքում են մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման ակտ:
- 4.5. Սույն պայմանագրի 4.3. կետով սահմանված գումարները Ընկերությունը Բանկին վճարում է Բանկի կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրերի հիման վրա: Բանկն այդ գումարները կարող է նաև անակցեպտ կարգով գանձել Բանկում բացված Ընկերության բանկային հաշվից:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՍՎՈՒԹՅՈՒՆԸ

- 5.1. Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:
- 5.2. Սույն պայմանագրի մի կողմը պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, եթե դա ծագել է մյուս կողմի՝ սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու հետևանքով:
- 5.3. Պետական լիազոր մարմնի կողմից պարտատոմսերի հայտարարագիրը չգրանցելու կամ ՀՖԲ-ում պարտատոմսերը չցուցակելու համար Բանկը պատասխանատվություն չի կրում, եթե դա եղել է Բանկից անկախ պատճառներով:
- 5.4. Սույն պայմանագրի 4.3. կետում նշված ժամկետներում ծառայությունների դիմաց վճարումը չկատարելու դեպքում Ընկերությունը Բանկին վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար ժամկետանց գումարի 0.2 տոկոսի չափով: Տույժի վճարումը Ընկերությանը չի ազատում իր վրա դրված պարտավորությունները կատարելուց և խախտումները վերացնելու պարտականության կատարումից:
- 5.5. Սույն պայմանագրի 2.2.1-2.2.6 ենթակետերով սահմանված ծառայությունների մատուցումից հրաժարվելու դեպքում Բանկը Ընկերությանը վերադարձնում է ծառայությունների մատուցման դիմաց Ընկերության կողմից վճարված կանխավճարը ամբողջությամբ և վճարում է սույն պայմանագրի 4.1. կետում նշված գումարի 10%-ի չափով տուգանք:
- 5.6. Սույն պայմանագրի 2.2.8. ենթակետով սահմանված պարտավորությունները Բանկի նախաձեռնությամբ չկատարելու դեպքում չմատուցված ծառայությունների գնի որոշման համար որպես ծառայությունների սակագին հաշվարկվում է ամսական 50 հազ. ՀՀ դրամ, իսկ չմատուցված ծառայությունների ժամկետ՝ պայմանագրի լուծման պահից մինչև պարտատոմսերի մարումն ընկած ժամանակահատվածը: Նշված գումարը Բանկը պարտավորվում է վճարել Ընկերությանը ծառայությունների դադարեցման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում:
- 5.7. Սույն պայմանագիրը Ընկերության նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծվելու դեպքում Ընկերությունը Բանկին վճարում է սույն պայմանագրի 4.1. կետում նշված գումարի տաս տոկոսի չափով գումար և փաստացի մատուցված ծառայության դիմաց՝ համաձայն երկկողմանի ստորագրված փաստացի մատուցված ծառայության հանձնման-ընդունման ակտի:
- 5.8. Սույն պայմանագրի որևէ դրույթի անվավերությունը չի հանգեցնում այլ դրույթի (դրույթների) անվավերության: Կողմերը պարտավորվում են չվիճարկել պայմանագրի լրիվ կամ մասնակի անվավերությունը կամ իրավաբանական ուժը՝ պայմանագրով սահմանված իրենց պարտավորությունները չկատարելու համար, և միաժամանակ պարտավորվում են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցներն ու գործողությունները պայմանագրի նպատակը և պայմանները գործող օրենսդրության համաձայն իրականացնելու ուղղությամբ:
- 5.9. Կողմերը պարտավորվում են ապահովել պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման գործընթացի հրապարակայնությունը՝ օրենքով սահմանված կարգով և պայմաններով:





**6. ԱՆՅԱԴԹԱՎԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կան մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

**7. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅՑՆԵՐ**

- 7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրելու պահից և գործում է մինչև սույն պայմանագրով նախատեսված Կողմերի պարտավորությունների լրիվ և պատշաճ կատարումը:
- 7.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերի նախաձեռնությամբ՝ այդ մասին մյուս Կողմին նախապես մեկ ամիս առաջ պատշաճ ծանուցելով:
- 7.3. Սույն պայմանագրում Կողմերի համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:
- 7.4. Սույն պայմանագրի կատարման ընթացքում Կողմերի միջև առաջացած բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 7.5. Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է ապահովել մյուս կողմից ստացված ֆինանսական, առևտրային և այլ տեղեկատվության խիստ գաղտնիությունը: Նման տեղեկատվության փոխանցումը երրորդ անձանց հնարավոր է միայն Կողմերի գրավոր համաձայնությամբ, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:
- 7.6. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ընկերություն

Բանկ



«Հայֆուսգազարդ» ՓԲԸ  
 Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 43  
 ՀՎՀՀ 00046317  
 հ/հ 247010052709/1000  
 «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ  
 հեռ. 29 47 28  
 ֆաքս. 29 47 28

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ  
 Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Խանջան 13/2  
 ՀՎՀՀ 02574955  
 հ/հ 103002102509,  
 ՀՀ կենտրոնական բանկ  
 հեռ. 58 44 19, 52 95 93  
 ֆաքս. 52 95 91

Վարչության նախագահ-Գլխավոր տնօրեն

Տնօրինության նախագահ-Գործադիր տնօրեն

**Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր**  
**Տեղաբաշխման խմբի ստեղծման և գործունեության մասին**

---

ք. Երևան

05/հունիսի/2008թ.

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Գլխավոր տեղաբաշխող), ի դեմս գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյանի, որը գործում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա,

«ԱՐՅԱԽ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս Վարչության նախագահ Կամո Ներսիսյանի, որը գործում է «ԱՐՅԱԽ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա,

«ԱՐՄԵՆԲԲՐՈԿ» բաց բաժնետիրական ընկերությունը, ի դեմս Գլխավոր տնօրեն Արամ Կայֆաջյանի, որը գործում է «ԱՐՄԵՆԲԲՐՈԿ» ԲԲԸ-ի կանոնադրության հիման վրա,

(այսուհետ՝ տեղաբաշխման խմբի անդամներ), բոլորը միասին անվանվելով Մասնակիցներ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

1.1. Հիմք ընդունելով «Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Թողարկող) տնօրենների խորհրդի 11.09.2007թ. թիվ 3/47-2007 որոշումը և հաշվի առնելով, որ Թողարկողը և Գլխավոր տեղաբաշխողը 20.05.2008թ. կնքել են պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման ծառայությունների մատուցման թիվ IB/08-002 պայմանագիրը, Գլխավոր տեղաբաշխողը ստանձնել է երաշխավորված տեղաբաշխման եղանակով տեղաբաշխել Թողարկողի 1,000,000,000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով պարտատոմսերը (այսուհետև՝ պարտատոմսեր) հետևյալ պայմաններով.

<b>Պարտատոմսի դասը</b>	Անվանական արժեկտրոնային պարտատոմս
<b>Պարտատոմսի ձևը</b>	Ոչ փաստաթղթային
<b>Տեղաբաշխման ենթակա ծավալը</b>	1,000,000,000 ՀՀ դրամ
<b>Տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի քանակը</b>	20,000 հատ
<b>Մեկ պարտատոմսի անվանական արժեքը</b>	50,000 ՀՀ դրամ
<b>Պարտատոմսերի արժեկտրոնային եկամտաբերությունը</b>	տարեկան 9.5%
<b>Պարտատոմսերի տեղաբաշխման եկամտաբերություն</b>	տարեկան 10%
<b>Շրջանառության ժամկետը</b>	36 ամիս
<b>Շրջանառության ձևը</b>	Ազատ շրջանառության իրավունքով
<b>Արժեկտրոնի (տոկոսագումարների) վճարման պարբերականությունը</b>	Արժեկտրոնների (տոկոսագումարների) վճարումը կատարվում է տեղաբաշխման առաջին օրվանից հետո կիսամյակային պարբերականությամբ

**Տեղաբաշխման գնի որոշման քանակ**

$$P = \frac{N}{(1+t * R/m)} * \left\{ c * \sum_{j=1}^n \frac{1}{(1+R)^{j-1}} + \frac{1}{(1+R)^{n-1}} \right\}$$

որտեղ՝

- P – պարտատոմսի հաշվարկված (տեղաբաշխման) գինն է,
- N – պարտատոմսի անվանական արժեքն է,
- R – պարտատոմսի ներդրումային եկամտաբերության կիսամյակային տոկոսադրույքն է,
- t – մինչև տվյալ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակն է,
- m – ընթացիկ կիսամյակում ընդգրկված օրերի քանակն է,
- c – կիսամյակային վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է,
- n – մնացած արժեկտրոնների վճարումների քանակն է, ընդ որում n արժեքը պարտատոմսի շրջանառության ընթացքում փոփոխվում է ըստ նվազման, այսինքն՝ 6-1 միջակայքում,
- j – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոփոխվում է տվյալ պահից մինչև վերջնական մարում մնացած արժեկտրոնների վճարումների քանակից կախված, ընդ որում՝ j արժեքը փոփոխվում է ըստ աճման և ընդունում է 1-ն արժեքները (երբ n-ը ընդունում է 1 արժեք, j-ն նույնպես ընդունում է 1 արժեքը):

- 1.2. Հիմք ընդունելով Թողարկողի ու Գլխավոր տեղաբաշխողի միջև 20.05.2008թ. կնքված թիվ IB/08-002 պայմանագրի 2.2.5. կետի պահանջները՝ Գլխավոր տեղաբաշխողն իրավասու է.  
ա) ձևավորել տեղաբաշխողների խումբ (սինդիկատ)՝ համապատասխան համաձայնագիր կնքելու միջոցով,  
բ) կազմակերպել պարտատոմսերի ազատ բաժանորդագրություն՝ իր կողմից սահմանված կարգին համապատասխան:

## **2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

- 2.1. Սույն պայմանագրով Մասնակիցները ստեղծում են տեղաբաշխման խումբ պարտատոմսերի տեղաբաշխման նպատակով՝ հիմք ընդունելով Թողարկողի ու Գլխավոր տեղաբաշխողի միջև 20.05.2008թ. կնքված թիվ IB/08-002 պայմանագրի 2.2.5. կետով Գլխավոր տեղաբաշխողին վերապահված իրավասությունը:
- 2.2. Տեղաբաշխման խումբը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով կազմակերպել պարտատոմսերի երաշխավորված տեղաբաշխում:
- 2.3. Տեղաբաշխման խումբը չի հանդիսանում իրավաբանական անձ:
- 2.4. Տեղաբաշխման խմբի անդամները ձեռք են բերում 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ընդհանուր ծավալով 10,000 (տաս հազար) հատ պարտատոմսերը (որպես կայուն պարտավորություն) հետևյալ մասնաբաժիններով.
  - 2.4.1. «ԱՐՍՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն՝ 5,000 (հինգ հազար) հատ պարտատոմս, որը կազմում է տեղաբաշխման ենթակա ծավալի 25%-ը,
  - 2.4.2. «ԱՐՄԵՆԲԲՐՈԿ» ԲԲԸ-ն՝ 3,000 (երեք հազար) հատ պարտատոմս, որը կազմում է տեղաբաշխման ենթակա ծավալի 15%-ը,
  - 2.4.3. «ԱՐՑԱԽ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն՝ 2,000 (երկու հազար) հատ պարտատոմս, որը կազմում է տեղաբաշխման ենթակա ծավալի 10%-ը:
- 2.5. Տեղաբաշխման խմբի անդամները կարող են լավագույն ջանքերի սկզբունքով (առանց պարտատոմսեր ձեռք բերելու լրացուցիչ պարտավորությունների) մասնակցել 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) դրամ ծավալով 10,000 (տաս հազար) հատ պարտատոմսերի ազատ բաժանորդագրությանը՝ սույն պայմանագրով և Գլխավոր տեղաբաշխողի կողմից սահմանված կարգով և պայմաններով:

## **3. ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ**

- 3.1. Տեղաբաշխման խմբի գործունեությանը վերաբերվող հարցերը լուծվում են Մասնակիցների ներկայացուցիչների ժողովների (հանդիպումների) ընթացքում կամ հեռակա հարցումների միջոցով (հեռախոսով, ֆաքսով, էլեկտրոնային կապի միջոցներով, գրավոր հարցման միջոցով)՝ նրանց ընդհանուր համաձայնության հիման վրա:
- 3.2. Տեղաբաշխման խմբի անդամը կարող է դուրս գալ տեղաբաշխման խմբից՝ Գլխավոր տեղաբաշխողին նախապես գրավոր ձևով տեղեկացնելով այդ մասին՝ տեղաբաշխման խմբից դուրս գալուց առնվազն 10 աշխատանքային օր առաջ: Սույն պայմանը չպահպանելը

հանգեցնում է դուրս եկող անդամի սույն պայմանագրով սահմանված պատասխանատվությանը:

- 3.3. Տեղաբաշխման խմբի անդամն իրավունք ունի սույն պայմանագրի 3.2. կետով սահմանված պայմանը չպահպանելով դուրս գալ տեղաբաշխման խմբից և հրաժարվել սույն պայմանագրից բխող պարտավորությունների կատարումից, եթե Թողարկողի կողմից փոփոխվել են սույն պայմանագրի 1.1. կետով սահմանված պայմաններից որևէ մեկը:
- 3.4. Տեղաբաշխման խմբից որևէ անդամի դուրս գալու և նրա կողմից ձեռք բերման ենթակա՝ սույն պայմանագրի 2.4. կետով սահմանված ծավալի պարտատոմսեր (այսուհետև՝ նախատեսված պարտատոմսեր) գնելուց հրաժարվելու դեպքում, տեղաբաշխման խմբի մյուս անդամները գնելու նախապատվության իրավունքով կարող են ձեռք բերել նախատեսված պարտատոմսերն իրենց՝ սույն պայմանագրի 2.4. կետով սահմանված ծավալին համամասնորեն: Տեղաբաշխման խմբի անդամների կողմից գնելու նախապատվության իրավունքից չօգտվելու դեպքում Գլխավոր տեղաբաշխողը պարտավորվում է նախատեսված պարտատոմսերը ձեռք բերել կամ երրորդ անձին օտարել սույն պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան:
- 3.5. Մասնակիցները պարտատոմսերը պարտավոր են ձեռք բերել պարտատոմսերի ազդագիրը գրանցվելուց հետո հինգերորդ օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում, որի վերաբերյալ Գլխավոր տեղաբաշխողը պարտավոր է ծանուցել տեղաբաշխման խմբի անդամներին:
- 3.6. Տեղաբաշխման խմբի անդամների կողմից նախատեսվող պարտատոմսերը ձեռք են բերվում պարտատոմսերի ձեռք բերման հաստատման ներկայացման միջոցով (նշելով արժեթղթերի հաշվի համարի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները) և սույն պայմանագրի 1.1. կետում սահմանված՝ տեղաբաշխման գնի բանաձևով որոշված գնով:
- 3.7. Պարտատոմսերի ձեռք բերման համար տեղաբաշխման խմբի անդամները պարտավոր են նախատեսված պարտատոմսեր ձեռք բերելու համար անհրաժեշտ դրամական միջոցները փոխանցել Գլխավոր տեղաբաշխողի մոտ բացված 250003691186 տարանցիկ հաշվին, իսկ Գլխավոր տեղաբաշխողը պարտավոր է բանկային հաշվին գումարի մուտքագրման օրվա ընթացքում Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիային (այսուհետև՝ ՀԿԴ) տալ Թողարկողի թողարկման հաշվից արժեթղթերի փոխանցման հանձնարարական՝ ՀԿԴ-ի կանոններով սահմանված կարգով: Գլխավոր տեղաբաշխողը պարտատոմսերի ձեռք բերման գումարները հանձնում է Թողարկողի տնօրինմանը միայն պարտատոմսերը տեղաբաշխման խմբի անդամների արժեթղթերի հաշվին գրանցվելուց հետո:
- 3.8. Պարտատոմսերի տեղաբաշխումը չեղյալ ճանաչվելու դեպքում պարտատոմսերի ձեռք բերման համար տեղաբաշխման խմբի անդամների կողմից Գլխավոր տեղաբաշխողին փոխանցված գումարները վերադարձվում են տեղաբաշխման չեղյալ ճանաչելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով:
- 3.9. Մասնակիցների կողմից սույն պայմանագրի 2.4. կետով ձեռք բերված պարտատոմսերը կարող են պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո (երկրորդային շուկայում) օտարվել երրորդ անձանց՝ օրենքով սահմանված կարգով:
- 3.10. Տեղաբաշխման խմբի անդամները սույն պայմանագրի 2.4. կետով սահմանված ծավալի պարտատոմսերի ձեռք բերման համար Գլխավոր տեղաբաշխողից ստանում են պարզևավճար՝ սույն պայմանագրի 4.1.6. կետով սահմանված կարգով և չափով:
- 3.11. Տեղաբաշխման խմբի անդամները պարտատոմսերի ազատ բաժանորդագրությանը կարող են մասնակցել՝ իրենց կողմից ներդրողներ ներգրավելու և Գլխավոր տեղաբաշխողի կողմից սահմանված կարգին համապատասխան փաստաթղթեր հավաքելու և Գլխավոր տեղաբաշխողին ներկայացնելու միջոցով, որի համար ստանում են պարզևավճար՝ սույն պայմանագրի 4.1.6. կետով սահմանված կարգով և չափով:

#### **4. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- 4.1. Մասնակիցներն իրավունք ունեն.
  - 4.1.1. Տեղաբաշխման խմբից որևէ անդամի դուրս գալու դեպքում նախապատվության իրավունքով ձեռք բերել դուրս եկող անդամի կողմից ձեռք բերման ենթակա պարտատոմսերը՝ սույն պայմանագրով սահմանված կարգով,
  - 4.1.2. Մյուս մասնակիցներից պահանջել սույն պայմանագրի դրույթների պատշաճ կատարում,
  - 4.1.3. Ցանկացած պահի դուրս գալ տեղաբաշխման խմբից՝ պահպանելով սույն պայմանագրի 3.2. կետով սահմանված պահանջները,

- 4.1.4. Գլխավոր տեղաբաշխողն իրավունք ունի տեղաբաշխման խմբի անունից Թողարկողի հետ վարել բանակցություններ և ներկայացնել տեղաբաշխման խմբի անդամների շահերը,
  - 4.1.5. պարտատոմսերի ազատ բաժանորդագրության ընթացքում մասնակցել պարտատոմսերի տեղաբաշխմանը՝ սույն պայմանագրով և Գլխավոր տեղաբաշխողի կողմից սահմանված կարգով և պայմաններով,
  - 4.1.6. Սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտատոմսերը ձեռք բերելու ուղղությամբ ստանձնած պարտավորությունների և պարտատոմսերի ազատ բաժանորդագրության ընթացքում իր միջոցով ներդրողների կողմից ձեռք բերված պարտատոմսերի տեղաբաշխման համար Գլխավոր տեղաբաշխողից ստանալ իրենց կողմից ձեռքբերվող և ազատ բաժանորդագրության ընթացքում իրենց միջոցով տեղաբաշխված պարտատոմսերի ընդհանուր արժեքի 0.2%-ի չափով պարգևավճար՝ համապատասխան հաշիվ դուրս գրելու միջոցով:
  - 4.1.7. Պարտատոմսերի տեղաբաշխումը չեղյալ ճանաչվելու դեպքում ստանալ Գլխավոր տեղաբաշխողին փոխանցված գումարները տեղաբաշխման չեղյալ ճանաչելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով:
- 4.2. Մասնակիցները պարտավոր են.
- 4.2.1. Կատարել սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները,
  - 4.2.2. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու համար պարտավորությունը չկատարած տեղաբաշխման խմբի անդամը պարտավոր է Գլխավոր տեղաբաշխողին վճարել սույն պայմանագրի 2.4. կետով սահմանված՝ իր կողմից ձեռք բերվող պարտատոմսերի ծավալի 0.2%-ի չափով տուգանք,
  - 4.2.3. Չպահպանելով սույն պայմանագրի 3.2. կետով սահմանված պայմանը տեղաբաշխման խմբից դուրս գալու դեպքում տեղաբաշխման խմբի անդամը պարտավոր է Գլխավոր տեղաբաշխողին վճարել սույն պայմանագրի 2.4. կետով սահմանված՝ իր կողմից ձեռք բերվող պարտատոմսերի ծավալի 0.1%-ի չափով տուգանք,
  - 4.2.4. Չբացահայտել իրեն հայտնի դարձած այն գաղտնի տեղեկությունները, որոնք վերաբերվում են Թողարկողին և սույն պայմանագրի պայմաններին,
  - 4.2.5. Գլխավոր տեղաբաշխողը պարտավոր է տեղաբաշխման խմբից դուրս եկող անդամի կողմից ձեռք բերման ենթակա պարտատոմսերը ձեռք բերել կամ երրորդ անձի օտարել սույն պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան՝ տեղաբաշխման խմբի մյուս անդամների կողմից գնելու նախապատվության իրավունքից չօգտվելու դեպքում:

**5. ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ**

- 5.1. Տեղաբաշխման խումբը դադարեցնում է իր գործունեությունը և սույն պայմանագիրը համարվում է լուծված հետևյալ դեպքերում.
  - 5.1.1. Մասնակիցների կողմից սույն պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները լրիվ կատարելուց հետո,
  - 5.1.2. Տեղաբաշխման խմբի անունից Գլխավոր տեղաբաշխողի և Թողարկողի միջև կնքված պայմանագրի գործողության դադարեցման դեպքում,
  - 5.1.3. Մասնակիցների փոխադարձ համաձայնությամբ,
  - 5.1.4. Մասնակիցների թիվը մեկին հասնելու դեպքում,
  - 5.1.5. ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով:

**6. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**


- 6.1. Մասնակիցները ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում սույն պայմանագրի շրջանակներում իրենց ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
- 6.2. Սույն պայմանագրի գործողության ընթացքում Մասնակիցների միջև ծագած բոլոր վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում վեճերն ու տարաձայնությունները ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 6.3. Սույն պայմանագրի բոլոր փոփոխություններն ու լրացումները վավեր են, եթե կազմված են գրավոր, ստորագրված են Մասնակիցների ներկայացուցիչների կողմից և վավերացված են Մասնակիցների կնիքներով:

6.4. Սույն պայմանագիրը կազմված է 3 (երեք) իրավահավասար օրինակից, որոնցից մեկական օրինակ պահվում է Մասնակիցներից յուրաքանչյուրի մոտ:

**7. ՄԱՆԱԿԻՑՆԵՐԻ ՎՈՎԵՐՎՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Գլխավոր տեղաբաշխող՝



«ԱՐՄՍՎԻՍՏԱՆԿ» ՓԲԸ  
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Խանջան 13/2  
ՀՎՀՀ 02574955  
Հեռ. 58 44 19, 52 95 93  
Բ/Հ 103002102509, ՀՀ ԿԲ  
Գործադիր տնօրեն՝ Գ. Մաչանյան




**ARM SWISS BANK**  
*Private & Investment Banking*

Տեղաբաշխման խմբի անդամներ՝

«ԱՐՑԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ  
Հասցե՝ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Կոմիտասի պող. 10  
ՀՎՀՀ 90001386  
Հեռ. (374 479) 71249, 52705  
Բ/Հ 103002102236, ՀՀ ԿԲ  
Վարչության նախագահ՝ Կ. Արսենյան



«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ  
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 32/1  
ՀՎՀՀ 02520391  
Հեռ. 53 87 00  
Բ/Հ 1810052088793327  
«Ջարգացման հայկական բանկ» ԲԲԸ  
Գլխավոր տնօրեն՝ Ա. Կալիանյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ ԲԲԸ-Ը  
ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է.**

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԳՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ /ՕՖԵՐՏԱ/**

«ՀԱՅԱՍՏԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-Ը /հասցեն՝ 375010, ք. Երևան, Միեր Մկրտչյան փ. 5<sup>թ</sup>, հեռախոս՝ 520-978, 566-446/, ղեկավարվելով Արժեթղթերի շուկայի մասին ՀՀ օրենքի 176 և 195 հոդվածների և Բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենքի 51 հոդվածի պահանջներով բոլոր բաժնետիրական ընկերություններին առաջարկում է կնքել «Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեստորի վարման» պայմանագիր հետևյալ պայմաններով.

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Սույն պայմանագրով «ՀԱՅԱՍՏԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-Ը /այսուհետև՝ Կատարող/ պարտավորվում է սույն առաջարկը /օֆերտան/ ընդունած ընկերության /այսուհետև՝ Պատվիրատու/ հանձնարարությամբ մատուցել 05.12.2006 թ. ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդի որոշմամբ հաստատված «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնադրքով» և «ՀԱՅԱՍՏԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի կանոններով նախատեսված ծառայությունները /այսուհետև՝ Ծառայություններ/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել մատուցվող ծառայությունների գինը:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1. Կատարողը պարտավոր է.

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով.

2.1.2. Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված «ՀԱՅԱՍՏԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի կանոններով սահմանված ժամկետում և կարգով.

2.1.3. Ուժի մեջ մտնելուց առնվազն 1 ամիս առաջ Պատվիրատու տեղեկացնել «ՀԱՅԱՍՏԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի այն կանոնների մեջ կատարվող փոփոխությունների մասին, որոնք վերաբերվում են սույն պայմանագրով մատուցվող ծառայությունների մատուցման ժամկետներին, կարգին և զինն:

2.2. Պատվիրատուն պարտավոր է.

2.2.1. Կատարողին տեղեկացնել արժեթղթերի սեփականատերերի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված տվյալների, անճշտությունների, լրացումների մասին և տրամադրել դրանց վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր.

2.2.2. Մատուցված Ծառայությունների դիմաց վճարել սույն պայմանագրի 3.1-րդ կետում նշված գինը:

2.3. Կատարողն իրավունք ունի.

2.3.2. Հրաժարվել սույն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների կատարումից, եթե Պատվիրատու կողմից խախտվել է սույն պայմանագրի 3-րդ կետի պահանջները:

2.4. Պատվիրատուն իրավունք ունի.

2.4.1. Կատարողից պահանջել սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների ժամանակին և լրիվ ծավալով մատուցում:

**3. ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1. Պատվիրատուն Կատարողի կողմից մատուցված /մատուցվող/ Ծառայությունների համար վճարումները կատարում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված «ՀԱՅԱՍՏԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի ծառայությունների «Սակագների մասին» կանոններով սահմանված սակագների համապատասխան, դրանով սահմանված կարգով ու ժամկետներում:

3.2. Սույն պայմանագրի 3.1 կետով սահմանված վճարումները ուշացնելու դեպքում Պատվիրատուն վճարում է «ՀԱՅԱՍՏԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի ծառայությունների սակագների մասին» կանոններով և սույն պայմանագրով սահմանված տույժ՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0,15 տոկոսի չափով:

3.3. Սույն պայմանագրի 3.2 կետով նախատեսված տույժի չափը չի կարող լինել «ՀԱՅԱՍՏԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի ծառայությունների սակագների մասին» կանոններով սահմանված տույժի չափից ավելի:

**4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

4.1. Պատվիրատուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում Կատարողին տրամադրված տվյալների հավաստիության համար:

4.2. Կատարողը պատասխանատվություն չի կրում ռեեստրի հետ կապված գործողությունների իրականացման հետևանքով Պատվիրատուի կամ սեփականատիրոջ կրած վնասների համար, եթե նշված գործողությունները կատարվել են վերջիններիս հանձնարարականների հիման վրա՝ ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան:

4.3. Կատարողը պատասխանատվություն չի կրում մինչև սույն պայմանագրի կնքումը Պատվիրատուի Ռեեստրը վարող անձանց գործողությունների համար:

4.4. Եթե Կատարողը չի կատարել կամ ոչ պատշաճ կերպով է կատարել սույն պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները, ապա նա Պատվիրատուին և նրա սեփականատերերի առջև պատասխանատվություն է կրում նրանց պատճառված վնասների համար, եթե դրանք առաջացել են Կատարողի մեղքով:

4.5. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհարթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

**5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ**

5.1. Կատարողն իր պարտականությունների կատարմանը ձեռնամուխ է լինում սույն առաջարկի /օֆերտայի/ ակցեպտոն ստանալու հաջորդ օրվանից:

5.2. Պայմանագիրը գործում է անժամկետ և կարող է լուծվել միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, այլ օրենքներով ու իրավական ակտերով սահմանված կարգով:

**6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԱՐՏՆՈՒԹՅՈՒՆԸ**

6.1. Կատարողի մոտ սույն պայմանագրի համաձայն պահպանվող տեղեկատվությունը հանդիսանում է Պատվիրատուի սեփականությունը:

6.2. Կատարողը պարտավոր է պահպանել նշված տեղեկատվության զաղտնիությունը և դրանք իրավունք ունի տրամադրել երրորդ անձանց միայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

6.3. Կատարողն իրավասու չէ նշված տեղեկատվությունը ծառայեցնել սեփական նպատակներին:

6.4. Կատարողն պատասխանատվություն է կրում նշված տեղեկատվության տարածման կամ օգտագործման համար՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

**7. ԾԱՆՈՒՅԱԳՐԵՐ**

7.1. Պայմանագրի կողմերի միջև ծանուցումները և հաղորդագրերը պետք է ձևակերպված լինեն գրավոր ձևով, ստորագրված սույն պայմանագրի կողմերի լիազորված անձանց կողմից և վավերացված կնիքով, հանձնված անձնապես (ուղարկողի օրինակի վրա ստացողի կողմից ստանալու վերաբերյալ նշում կատարելով), ուղարկված ֆաքսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով (ստանալու վերաբերյալ ֆաքսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկողին տեղյակ պահելով) կամ ուղարկված պատվիրված փոստի միջոցով:

**8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

8.1. Սույն պայմանագրի կողմն իրավունք ունի այլ անձի փոխանցել սույն պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտավորությունները մյուս կողմի համաձայնությամբ, եթե ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով այլ բան սահմանված չէ:

8.2. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների վերաբերյալ կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

8.3. Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակից՝ յուրաքանչյուր կողմի համար մեկ օրինակ:

8.4. Սույն պայմանագրին կցված հավելվածները հանդիսանում են նրա անբաժանելի մասը:

8.5. Սույն պայմանագրում նշված ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված «ՀԱՅԱՍՏԱՆԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի կանոններին և այլ նորմատիվ ակտերին կարող էք ծանոթանալ «ՀԱՅԱՍՏԱՆԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի գրասենյակում, հասցեն՝ ք. Երևան, Միեր Սկրտչյան փ. 5<sup>թ</sup>, հեռ. 520-978, 566-446:

**ԿԱՏԱՐՈՂ**  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ԳԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ-ի  
տնօրեն

Վ.Ստեփանյան







## Доверенность

Город Москва, Российская Федерация

16.07.2008 ,

Я, Скиданов Геннадий Николаевич, 11.04.1962г. года рождения, являющийся членом Совета Директоров ЗАО "АрмРосгазпром", начальником главного Коммерческого управления ООО НГК «Итера», проживающий в РФ, г. Москва, ул. Академика Королева, дом 4, корп. 2, кв. 468 (серия 45 08 284331, выдан паспортно-визовым отделением ОВД Останкинского района, г. Москвы, 01.07.2006), настоящей доверенностью уполномочиваю члена Совета Директоров, Председателя Правления-Генерального Директора ЗАО "АрмРосгазпром" Карапетяна Карена Вильгельмовича, 14.08.1963 года рождения, проживающего в РА, г. Ереван, ул. Авета Аветисяна, д. 4, кв. 22, (серия АГ 0676563, 14.04.2006 г., код 004), подписать за меня декларацию на регистрацию ценных бумаг (облигаций) ЗАО "АрмРосгазпром" (Решение Совета Директоров ЗАО "АрмРосгазпром" № 3/47-2007 от 11.09.2007г.), а также представляемые в Центральный Банк РА и в ОАО "Армянская фондовая биржа" иные документы, связанные с выпуском ценных бумаг (облигаций) ЗАО "АрмРосгазпром".

Доверенность выдана сроком на три месяца.

Скиданов Геннадий Николаевич



## Доверенность

Город Москва, Российская Федерация

15.05.2008

Я, Ахметвалеев Наиль Исакович, 11.08.1955 года рождения, являющийся членом Правления ЗАО "АрмРосгазпром", Начальником Отдела закупок, реализации газа республик Средней Азии и транспорта Коммерческого управления ООО НГК "ИТЕРА", проживающий в РФ, г. Москва, (серия 4508 115549, выдан ОВД "Ломоносовский", г. Москва, 21.07.2005г.) настоящей доверенностью уполномочиваю Председателя Правления-Генерального Директора ЗАО "АрмРосгазпром" Карапетяна Карена Вильгельмовича, 14.08.1963 года рождения, проживающего в РА, г. Ереван, ул. Авета Аветисяна, д. 4, кв. 22, (серия АГ 0676563, 14.04.2006 г., код 004), подписать за меня декларацию на регистрацию ценных бумаг (облигаций) ЗАО "АрмРосгазпром" (Решение Совета Директоров ЗАО "АрмРосгазпром" № 3/47-2007 от 11.09.2007г.), а также представляемые в Центральный Банк РА и в ОАО "Армянская фондовая биржа" иные документы, связанные с выпуском ценных бумаг (облигаций) ЗАО "АрмРосгазпром".

Доверенность выдана сроком на три месяца.

Ахметвалеев Наиль Исакович



## Доверенность


Город Москва, Российская Федерация

15.05.2008

Я, Боровлева Елена Игоревна, 26.09.1969 года рождения, являющийся членом Правления ЗАО "АрмРосгазпром", Заместителем начальника Управления международных проектов Департамента внешнеэкономической деятельности ОАО "Газпром", проживающий в РФ, г. Москва, (серия 45 00 420875, выдан ОВД "ЧЕРЕМУШКИ", г. Москва, 25.04.2001г.) настоящей доверенностью уполномочиваю Председателя Правления-Генерального Директора ЗАО "АрмРосгазпром" Карапетяна Карена Вильгельмовича, 14.08.1963 года рождения, проживающего в РА, г. Ереван, ул. Авета Аветисяна, д. 4, кв. 22, (серия АГ 0676563, 14.04.2006 г., код 004), подписать за меня декларацию на регистрацию ценных бумаг (облигаций) ЗАО "АрмРосгазпром" (Решение Совета Директоров ЗАО "АрмРосгазпром" № 3/47-2007 от 11.09.2007г.), а также представляемые в Центральный Банк РА и в ОАО "Армянская фондовая биржа" иные документы, связанные с выпуском ценных бумаг (облигаций) ЗАО "АрмРосгазпром".

Доверенность выдана сроком на три месяца.

Боровлева Елена Игоревна



## Доверенность

Город Москва, Российская Федерация

15.05.2008

Я, Подмышальский Анатолий Аркадьевич, 10.05.1941 года рождения, являющийся Заместителем Председателя Правления ЗАО «АрмРосгазпром», Начальником Управления по работе со странами ближнего зарубежья ОАО «Газпром», проживающий в РФ, г. Москва, ул. Старокачаловская 4, кв. 42 (серия 45 00 466121, выдан ОВД «Северное Бутово», г. Москва, 28.02.2001г.) настоящей доверенностью уполномочиваю Председателя Правления-Генерального Директора ЗАО «АрмРосгазпром» Карапетяна Карена Вильгельмовича, 14.08.1963 года рождения, проживающего в РА, г. Ереван, ул. Авета Аветисяна, д. 4, кв. 22, (серия AG 0676563, 14.04.2006 г., код 004), подписать за меня декларацию на регистрацию ценных бумаг (облигаций) ЗАО «АрмРосгазпром» (Решение Совета Директоров ЗАО «АрмРосгазпром» № 3/47-2007 от 11.09.2007г.), а также представляемые в Центральный Банк РА и в ОАО «Армянская фондовая биржа» иные документы, связанные с выпуском ценных бумаг (облигаций) ЗАО «АрмРосгазпром».

Доверенность выдана сроком на три месяца.

Подмышальский Анатолий Аркадьевич



## Доверенность

Город Москва, Российская Федерация

15.05.2008

Я, Тернюк Александр Михайлович, 10.06.1955 года рождения, являющийся членом Правления ЗАО "АрмРосгазпром", Начальником отдела Управления по работе со странами ближнего зарубежья Департамента маркетинга, переработки газа и жидких углеводородов ОАО "Газпром", проживающий в РФ, г. Москва, (серия 45 09 096283, выдан 24.05.2007г., Отделением по Района Останкино ОУФМС РОССИИ по г.Москве в СВАО, код подраздекекия 770-084) настоящей доверенностью уполномочиваю Председателя Правления-Генерального Директора ЗАО "АрмРосгазпром" Карапетяна Карена Вильгельмовича, 14.08.1963 года рождения, проживающего в РА, г. Ереван, ул. Авета Аветисяна, д. 4, кв. 22, (серия AG 0676563, 14.04.2006 г., код 004), подписать за меня декларацию на регистрацию ценных бумаг (облигаций) ЗАО "АрмРосгазпром" (Решение Совета Директоров ЗАО "АрмРосгазпром" № 3/47-2007 от 11.09.2007г.), а также представляемые в Центральный Банк РА и в ОАО "Армянская фондовая биржа" иные документы, связанные с выпуском ценных бумаг (облигаций) ЗАО "АрмРосгазпром".

Доверенность выдана сроком на три месяца.

Тернюк Александр Михайлович



ՎճԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ N 2325

"10" հունիսի 2008թ.

Վճարող՝ «Հայֆուսգազարդ» ՓԲԸ ՀՎՀՀ - 23-00046317	<b>ԴԵԲԵՏ</b> հ2.N 2380003097950300	<b>ԳՈՒՄԱՐ (AMD)</b>  50,000.00
Վճարողի բանկը՝ Առեկսիմբանկ ՓԲԸ Բանկի կոդ՝ 23800	<b>ԿՐԵԴԻՏ</b> հ2.N 900005016119	օրվա տույժ %-ից
Ստացող՝ ՀՀ Պետ.բյուջե ՀՎՀՀ -	հ2.N	գումարը տույժով
Ստացողի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան Բանկի կոդ՝ 90000		
Փոստով-հեռագրով (ընդգծել)		Գործ.տեսակ Վճար.նշան. Վճար.ժամկ. Հերթ.վճար. Քղ.բանկի N
Գումարը բառերով՝ Հիսուն հազար դրամ		
Ապրանքի ստացման, կատարված ծառայության Ա/Թ 10/06/08		
Վճարման նպատակը, կատարված ծառայությունների, աշխատանքների, ապրանքի անվանումը, ապրանքային փաստաթղթերի գումարները և NN. Համ. 09.06.08թ. մուտք թիվ 2341 գեկուցագրի պարտատոմսերի ազդագրի գրանցման նպատակով պետ. տուրք		
Կ. Տ. Հաճախորդի ստորագրություններ՝ _____	<div data-bbox="1048 774 1489 933" data-label="Text"> <p>«ԱՐԷՆԻՄԲԱՆԿ» ՓԲԸ Արևիկաբանկի Բանկի ստորագր. ՀՎՀՀ - 23-00046317 «ԱՐԷՆԻՄԲԱՆԿ» ՓԲԸ Բանկի ստորագր.</p> </div>	